Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ

ԿԱՊԻԿՆԵՐ

(Պատկերազարդ)

Թարգմանուրիւն

ՅԱԿՈՎԲ ԲԱՀԱՆԱՅ ՍԱՌԻԿԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
Էրէտրաստարմ տպարան «ՀԵՐՄԷՍ» թնկեր., Մադաթեան փողոց 15.
1905
86

572.8
Լ-88

13129
3 :05. 2013
20 JUL 2010
572.8
Լ-88
530
55-ԼՈ
1002/9367

Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ

ԿԱՊԻԿՆԵՐ

(Պատկերազարդ)

Թարգմանութիւն

ՅԱԿՈՎԲ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌԻԿԵԱՆԻ

ԹԻՖԼԻԶ
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փողոց 15.
1905

86

Дозволено цензурою. Тифлисъ, 16 ноября 1904 г.

I

Նկարագրելով չէ կարելի երևակայել կապիկն՝ իր ամբողջ այլանդակ գեղեցկութեամբ։ Կապիկը մարդու հասցէին ուղղուած մի ծաղր է, որովհետև մարդու նման շատ բան ունի. սակայն եղած նմանութիւններն էլ շատ այլանդակ, կոշտ ու ծիծաղելի են։ Բայց, ի հարկէ, չպիտի կարծել, թէ բոլոր կապիկներն այլանդակ, տեսքով էլ զզուելի են։ Մեր երկրների մարդու համեմատութեամբ, անշուշտ, Աստուած գիտէ՝ թէ դրանք ինչ բաներ են. բայց չէ՞ որ աշխարհիս երեսին մեր երկրներից դուրս էլ տեղեր կան, որտեղ զանազան վայրենիներ են ապրում. ինչպէս օրինակ սև նեգրերը և պղնձագոյն հնդիկները։ Սրանց մէջ երբեմն սարսափելի այլանդակներն են պատահում—կարճահասակ, երկայնսկրոտ ձեռներով, մեծ ու կախ ընկած փորով, լայն ու պաճոյ քթով, փոքրիկ ճակատով, մեծ թշերով և ցցուած ստորին ծնօտով։ Այսպիսիների համեմատութեամբ կապիկները շատ էլ տգեղ չեն կարող համարուել։ Ասենք առանց այսպիսի համեմատութեան էլ կապիկների մի քանի տեսակները կան, որոնք տեսքով բաւական գեղեցիկ են. մի խօսքով, սրանցում էլ կան գեղեցիկներ ու տգեղներ, վայելչակազմներ ու այլանդակներ, ճարպիկներ ու անշնորհքներ...

Նայեցէք կապիկի կմախքին. (նկար 1.) եթէ դուք երբ և իցէ տեսել էք կովի, ձիու կամ շան կմախք, իսկոյն կնկատէք, որ այդ կմախքն ընդհանրապէս նման է այդ կենդանիների, առաւել ևս մարդու կմախքին.—ձեռք ու ոտքի նոյն ոսկրները, նոյն կողերը, նոյն ողնաշարը, նոյն թիակ-

ները, նոյն անրակները և այլն։ Կապիկի ոսկորները պատած են մսով, որ ծածկուած է բրդոտ մորթով, իսկ ներսում, ինչպէս և մարդու մէջ, տեղաւորուած են նրա թոքերը, սիրտը, լեարդը, ստամոքսը, աղիքները, փայծախը, երիկամունքը, մի խօսքով այն ամենն, ինչ որ հարկաւոր է ուտելու, խմելու, շնչելու, կերածը մարսելու, և ընդհանրապէս ապրելու համար։



Նկ. 1—Կապիկի կմախքը.

Շատ կապիկներ պոչ են ունենում—ոմանք կարճ, ոմանք երկար. բացի դրանից բրդով են ծածկուած լինում, իհարկէ ոչ միատեսակ. այնպիսիները կան, որոնց բուրդը կարճ է ու սեհրակ. ոմանցն էլ ընդհակառակը՝ շատ երկար է, կարծես մազէ մուշտակ լինի. (նկար 2.)։ Շատ անգամ այդ բուրդը միատեսակ գոյն է ունենում—երբեմն սև, երբեմն մոխրագոյն, պատահում է և զանազան գոյներով. այդ դէպքում մարմնի մի քանի տեղերը աչք ծակելու չափ նախշուն են լինում։ Ասիայում, հնդիկների երկրում, երբեմն բոլորովին սպիտակամորթ կապիկներ են պատահում. դրանք բաւական գեղեցիկ են և շատ թանկ են գնահատւում։

Աֆրիկայում, հաբէշների երկրում, մի տեսակ կապիկ կայ, որ աչքի է ընկնում իր գեղեցկութեամբ. դա Գվերեցա է կոչւում, որ մի շատ պատւական և ուրախ կենդանի է։ Ամբողջ մարմինը ծածկուած է խիտ ու սև մազով, որ կարծես թաւշէ հագուստ լինի. իսկ ճակատի, վզի երկու կողմերի, կզակի ու կոկորդի մազը բոլորովին սպիտակ է. բայց ահա թէ ինչով է նա գեղեցիկ. մարմնի երկու կողմերից



Նկար 2.

կախկխուած են երկար, արծաթի պէս սպիտակ մազեր, որոնց միջից փայլում է նրա մարմնի վրայի ձուլթի պէս սև մազը. պոչն էլ այդպիսի սպիտակ ու փափուկ պսակ է կազմում։ Գվէրէցան կապիկների մէջ ամենից գեղեցիկն է (նկ. 3)։ Դրան հակառակ՝ մանդրիլը մի կատարեալ հրէշ է. նայեցէք հէնց նրա հաստ ու անշնորհք մարմնին, մեծ գլխին, դնչին, ներս ընկած այտերին, մեծ ու տափակ քթին, մեծ-մեծ ու սուր ատամներով ահագին բերանին (նկ. 4). մազը կոշտ է ու խառ-

Նկ 3. Գ վ է ր է ց ա.

նուած. գոյնը դժուար է միանգամից որոշել. մէջքի մազը գորշ-կարմրաւուն է, կողերինը մի քիչ աւելի պարզ, փորինը մութ սպիտակ. կուրծքը դեղին է. իսկ մօրուքը բաց-դեղին—ճիշտ լիմոնի գոյնի։

Ի դէպս մօրուքի մասին։ Կապիկներից շատերը մօրուք են ունենում, որ զանազան տեսակ է լինում—նայելով կապիկների ցեղին. նոյնիսկ այնպիսի կապիկներ կան, ինչպէս օրինակ սատանի կապիկ կոչուածը, որոնք խիտ, երկար, գանգուր ու բաւական ծիծաղելի մօրուք են ունենում (նկ 5)։

Նոյնը պիտի ասել նաև կապիկներից մի քանի տեսակների գլխի մազերի մասին. ահ, որքան ծիծաղելի են գլխի այդ զարդերը... Նրանց մազերը սանրող չկայ, բայց մի տեսէք, թէ նրանցից ոմանք ինչ անկօղն են. կարծես հէնց նոր դուրս եկան սափրիչի մօտից, որ խուզել, սանրել,



Նկ. 4. Մ ա ն դ ր ի լ.

փափկացրել, գանգուրել է նրանց մազերը. մէկի համար քաքուլ է շինել, միւսի ճակատին փունջ թողել, երրորդի մազերին վեղարի ձև տուել... զարմացք... և դեռ մենք ուզում էինք կապիկներին այլանդակներ անուանել (նկ. 6)։

Պարսիկների մեր փողոցներում շրջեցրած կապիկները փոքր տեսակներին են պատկանում. դրանք կամ կզակա-

պիկներ են (Мартышка) կամ Պավիաններ. սկիւռի չափ կապիկներ էլ կան. սրանք ամենափոքր տեսակներն են. բայց մարդաչափ մեծերն էլ կան, որոնք մարդանման են կոչւում, որովհետև՝ մանաւանդ ջահել ժամանակը շատ նման են լինում մարդուն։ Ընդհանրապէս կապիկներից շատերն ամենից շատ մարդուն են նման. ոմանք էլ շանը կամ սկիւռին։ Կապիկների տեսակները շատ - շատ են և զանազան անուններ էլ ունեն, սակայն ես մանրամասն միայն կպատմեմ գարիլլայի, շիմպանզեի, օրանգ - ուտանի և ծիծաղից մեռցնող կզակապիկների մասին։

Նկ. 5. Սատանի կապիկ.

Առաջներում Եւրոպայում, ինչպէս օրինակ Ֆրանսիայում և Անգլիայումն էլ կապիկներ կային, բայց այժմ այլևս չկան։ Նրանք տաք երկրներ են սիրում, այդ պատճառաւ էլ նրանց հայրենիքն այժմ Ասիայի և Աֆրիկայի տաք գօտիներն են դարձել. համարա բոլոր կապիկներն ասիացի կամ աֆրիկացի են. ասենք ամերիկացիներ էլ կան։ Նրանք առհասարակ ապրում են խիտ ու անանցանելի անտառներում մեծ-մեծ խմբերով, երբեմն էլ միայնակ կամ առանձին ընտանիքով. մի քանիսներն էլ քաշւում են ժայռոտ սարերը։ Բնակութեան տեղ ընտրելիս նրանք ամենից շատ աշխատում են, որ շրջակայքում բաւականաչափ կեր լինի. դրա համար էլ եթէ անտառի խորերում կերակուրը քիչ է, բնակ-

ւում են գիւղերին մօտիկ, այն էլ այնպիսի գիւղեր են ընտրում, որոնց բնակիչները կապիկին դիպչելը կամ սպանելը մեղք են համարում։

Այստեղ արդէն նրանց համար ասպարէզ կայ. մօտերքում բանջարանոցներ ու պտղատէզներ, ուր հանում են անուշահամ սեխն ու ձմերուկը և այլ արմտիք, իսկ սրանց կողքին սիմինդրի ու շաքարեղէգնի ցանքեր, ուր նոյնպէս նրանք ուտելու բան ունեն։ Կապիկները բաց դաշտերում կամ թփուտներում ապրել չեն սիրում։ Գետերին մօտ ընկած ճահճոտ անտառներ—ահա նրանց մեծամասնութեան սիրած տեղը. այստեղից նրանք դուրս են գալիս միայն



Նկար 6.

համեղ կերակրներ որսալու համար։ Հէնց որ դաշտերում ու մարգագետիններում հասնում են պտուղներն ու երևում են ծղրիդները, իսկոյն կապիկները մեծ բաւականութեամբ թողնում են անտառն ու պտուղների վրայ ընկնում կամ ծղրիդներ որսում, որոնց նրանք բաւականութեամբ անուշ են անում։

Բոլոր կապիկները չորս ձեռնեան էլ են կոչւում, այդպիսի անուն ստանալու պատճառն այն է, որ բոլորն էլ իրենց չորս ոտներն իբրև ձեռներ կարող են գործածել—նրանցով ճարպիկ կերպով ամեն բան բռնել, ծառերի ճղներ կոտրտել և այլն։ Սրա պատճառն այն է, որ համարեա բոլորի ետի ոտների մեծ մատն ազատ կերպով ետ ու առաջ, աջ ու ձախ է դառնում. ճիշտ այնպէս՝ ինչպէս առաջի ոտների կամ մարդու ձեռքերի մեծ մատը։

Հրատաբքիր է իմանալ, թէ նրանք գետնի վրայ ինչպէս են մատ գալիս. նրանք քայլում են ընդհանրապէս չորս ոտների վրայ. միայն խոշոր տեսակներն, ինչպէս գարիլլան, օրանգ-ուտանը և շիմպանզէն կարող են կանգնել ետին ոտների վրայ և այդպէս մատ գալ. սակայն այդ քայլածքը շատ անճոռնի է և յիշեցնում է ետին թաթերի վրայ մատ եկող արջին. ասում են գարիլլան կարող է առաջին ոտներով ձեռնափայտի վրայ յենուել, իսկ ետինների վրայ մատ գալ. ինքան ուղիղ է այս—դժուար է ասել։ Շիմպանզէն էլ է կանգնում ետին ոտների վրայ, բայց այդ դէպքում էլ՝ մինչև ձեռքերը ծոծրակին չ'դարսէ, հաւասարակշռութիւն չի կարող պահել։

Առ հասարակ այս կապիկների մատ գալը մարդու քայլուածքին քիչ է նման։ Մարդը մատ գալիս գետնին միայն ոտներով է յենուում, իսկ գարիլլան և շիմպանզէն առաջիններով էլ են իրենց պաշտպանում.—թեթև կերպով բարձրացնում են իրանը և սկսում մատ գալ շատ դանդաղ ու անշնորհք կերպով. կարծես կռնատակերին անթացուպ ուներալիս լինին։

Գետնին այսքան անշնորհք կապիկներն իրենց շատ

լաւ են զգում ծառերի վրայ. այդտեղ նրանք աննման են թէ ճարպիկութեամբ, թէ դիւրաթեքութեամբ և թէ նոյնիսկ քաջութեամբ։ Այդ շարժումների ժամանակ մեծ ծառայութիւն է անում նրանց ճկուն ու երկար պոչը, որով շատ վարպետօրէն ծառին կպչել գիտեն։ Որպէսզի հասկանալի լինի թէ՝ կապիկները ծառերի վրայ որպիսի՞ ճարպիկութեամբ են շարժուում. ես առաջ կբերեմ Բրէմ գիտնականի գեղեցիկ նկարագիրը։

«Կապիկները կատարեալ ջամբազներ են. կարծես ուղղակի թռչում են. քսան, երեսուն ֆուտ ոստիւնը նրանց համար ոչինչ բան է. նրանք ծառի կատարից ընկնում են երեսուն ֆուտ ցած գտնուող ճուղի վրայ, որը թափով խոնարհուում, կրկին արագ բարձրանում ու կապիկին ուժեղ հակահարուածներ է տալիս, բայց նա սլաքի նման սուրում է օդի մէջ. այդ ժամանակ պոչն ու ոտները նրա համար ղեկ են. այդտեղից անփորձ երկրորդ ծառին անցնելով, նա ամենազարհուրելի փշուտներում այնպէս է անց ու դարձ անում, կարծես ուղիղ յատակի վրայ լինի—գետնաքարշ բոյսերը նրա համար հրաշալի սանդուղք են, ծառի բունն ուղիղ ճանապարհ, նոքա շուլալուել գիտեն ետևից ու առջևից, գլխիվեր ու գլխիվայր, ճուղի վերևից ու հակառակ կողմից. եթէ կապիկին ծառի կատարից ցած շպրտենք, նա իսկոյն կբռնի մի ճղնից և հանգիստ կերպով կսպասի մինչև ճուղը ճօճալուց դադարի. այնուհետև նա վեր կմագլցի ու ճղնից ճուղ կանցնի այնպէս, կարծես յատակի վրայ լինի. կոտրուեց այդ ճուղը, նա կբռնի երկրորդից, երրորդից, չորրորդից. իսկ եթէ վայր ընկաւ, այդ առանձին նշանակութիւն չի ունենալ։ Ինչ որ չի կարող բռնել առաջին ձեռքերով, կբռնի ետիններով։ Իսկ ամերիկականը նաև պոչով (նկ. 7)։ Պոչն ահագին գործ է կատարում. ոստիւնների ժամանակ բոլոր կապիկների համար նա ղեկ է. բացի դրանից նա շատ բանի է պէտք գալիս. շատ անգամ նոյնիսկ ընկերոջ սանդուղք է դառնում։ Պոչն Ամերիկայի կապիկների համար հինգերորդ, բայց ոչ, աւելի առաջին ձեռքն է։ Նրանից է կախ ընկնում

ու ճօճւում ամբողջ իրանը, նրանով է խուռոչներից կերակուր հանում, նա երբեմն սանդուղք է դառնում, իսկ երբ կապիկը ճաշից յետոյ քնել է ուզում, պոչը նրան իբրև մահճակալ է ծառայում։

Կեանքի մեծ մասը ծառերի վրայ անցկացնելով, կապիկները հաւասարեա՛ ընակարան չեն շինում, այլ գիշերում են



Նկար 7.

բաց երկնքի տակ, ընտրելով դրա համար աւելի խիտ ու յարմար ճղներ։

Միայն առանձնութիւն սիրող ու կանոնաւոր ընտանիք կազմող օրանդ-ուտանն է, որ ծառերի վրայ ճղներից բաւական մեծ բուն է շինում. ինչպէս պատմում են ճանապարհորդներն՝ այդ բունը երբեմն խրճիթանման է լինում, ուր հանգիստ գիշերում է—մարդու պէս կողքի վրայ պառկելով. ցուրտ եղած ժամանակը նա նոյնիսկ խոտերով ու տերևներով էլ է փաթաթւում։

Ուտելիքներում կապիկները շատ էլ խտրութիւն չեն դնում. ուտում են ամեն բան—պտուղներ, ընկոյզ, կոճղէզ, արմատիք, հատիկներ, տերևներ և բոյսերի հիւթեղ ցողուններ։

Ինչպէս տեսնում էք, կերակրի մեծ մասը բուսեղէն է։ Ջուն, թռչունների ձագերը և այլ սրանց նման ուտելիքները նրանց համար շատ քաղցր պատառներ են. մարդկանց մօտ սովորում են նաև միս ու ձուկն ուտել։

Անշուշտ, հետաքրքիր է իմանալ թէ կապիկները որքան են ապրում. այդ առթիւ որոշ բան ասելը դժուար է։ Ենթադրում են, որ մեծ տեսակներն ազատ ժամանակ մինչև 40 տարի կարող են ապրել. իսկ ազատութիւնից զրկուած դէպքում մի քիչ պակաս. առհասարակ անազատ կեանքը նրանց վրայ մահացու կերպով է ազդում. մեր երկրին նրանք դժուար են ընտելանում և միշտ իրենց հայրենիքի կարօտը քաշելով, հալ ու մաշ են լինում։ Դրանից թոքախտ են ստանում ու շուտով մեռնում։ Ասենք բոլորովին այլ կերպ վերաբերւող տեսակներ էլ կան։ Անազատ կեանքին աւելի դժուար ընտելանում են խոշոր տեսակները։ Հիւանդ, ևս առաւել մեռնող կապիկին նայելը շատ ծանր բան է. այդ ժամանակ որքա՛ն մարդկային բան կայ նրանում։ Ուրախ ու խաղասէր կապիկը թոքախտով հիւանդանալով, դառնում է տխուր, լուռ ու մռայլ. որքան աւելի է նա մօտենում մահուան, այնքան աւելի ցաւալի է դառնում նրան նայելը։ Ուշագրաւն այն է, որ այդտեղ, գերեզմանի դուռը հասած ժամանակ նրա գազանային բոլոր հակումները կորչում են և դրանց փոխարէն երևան են գալիս հոգու բոլոր լաւ կողմերը։

Ինչպիսի՜ շնորհակալութեամբ է ընդունում նոյնիսկ ամենափոքրիկ խնամք. ինչպէս թանկ է գնահատում ամեն մի փաղաքշանք. այդ ժամանակ նրա հայեացքը կատարեալ հնազանդութիւն ու անձնուիրութիւն է արտայայտում։ Բժիշկը դառնում է նրա բարերարը, որին նա մեկնում է իր թաթը, կարծես զարկերակը ցոյց տալու համար։ Այս բոլորը տեսնելուց յետոյ չի կարելի կապիկին չսիրել։

II

Կապիկներից ամենից աշխոյժը և ուրախը կզակապիկներն են։ Խաղեր, վազվզոց, կատակներ, թռչկոտալ, աղմուկ, կռիվ—ահա նրանց սովորական ժամանցը։ Նրանք ինչեր չեն անում ծառերի վրայ.—թռչկոտում են, աշխատելով մինը միւսին գերազանցել. ծառի ընով վեր ու վայր են անում. մի ոտքի վրայ ճօճում են, կամ թէ չէ պոչով փաթաթուելով ծառի ճղներին՝ հարուածներ է, որ հասցնում են իրար. դալար ոստեր ու կաղիններ պոկելով՝ իրար գլխով են տալիս. մի խօսքով մի բոպէ դադար, հանգիստ չունեն։ Միայն երեկոյեան, կամ թշնամու երևացած ժամանակն են մի քիչ դադար առնում։

Կուասէր են և բացի մարդուց, լէօպարդից ու կոկորդիլոսից ուրիշ ոչնչից չեն վախենում. նոյն իսկ արծիւը, որ հեշտութեամբ կարող է յափշտակել նրանց, կզակապիկների համար առանձին վտանգ չէ ներկայացնում։ Թունաւոր օձերից անդամ չեն վախենում, թէպէտ շատ զգուշութեամբ ու անվստահութեամբ են վերաբերուում։ Օրինակ. յայտնի է, որ այս կապիկները թռչունների ձագեր ու ձուաներ շատ են սիրում. այդ նրանց ամենահամեղ պատառն է։ Հէնց այդ դէպքում, երբ նրանք խոռոչն են տանում իրանց թաթը, որ իմանան ձու կամ ձուգ կա՞յ այնտեղ թէ ոչ, ահա հէնց այդ ժամանակ երևան է գալիս նրանց դէպի օձերն ունեցած անվստահութիւնը. կապիկը երբէք իր թաթը միանգամից չի կոխիլ խոռոչը. դեռ մի քանի անգամ կրծկրտկի, ուշադրութեամբ ականջ կդնի իմանալու՝ թէ արդեօք այնտեղ ոչինչ չէ շարժուում. և ապա թաթը կամաց-կամաց կմեկնի, սակայն միշտ ականջ դնելով ու բացուածքից ներս նայելով որովհետև օձերից մի քանիսի կծելու, այն էլ վատ կծելու սովորութիւնը գիտէ։

Կզակապիկներն ապրում են մեծ խմբերով, որոնցից

ամեն մինն անտառում իր որոշ տարածութիւնն ու շրջանն ունի։ Խմբերի մէջ դուք միշտ արուներ, էգեր ու ձագեր կտեսնէք։ Ապրելու համար ընտրում են այն տեղերն, ուր հաստեղ կեր գտնելն աւելի հեշտ է. ուստի միշտ սիմինդրի ու շաքարեղէգնի ցանքերին, այգիներին ու բանջարանոցներին մօտ են հաստատուում։

Իւրաքանչիւր հասարակութիւն, խումբ իր առաջնորդն ունի։

Ո՞րտեղից են այդ առաջնորդներն, ո՞վ է ընտրում նրանց.—ոչ ոք։

Իրենք են, որ շնորհիւ սեփական ընդունակութեան, խելքի, ճարպիկութեան և գլխաւորապէս ուժի, առաջնորդ են դառնում։ Այդ բանն ընդհանրապէս այսպէս է կատարուում. առաջնորդի պաշտօն ձեռք բերելու համար մի ժամանցու ժենամարտ, կռիւ է սկսուում. ոյժն ու իրաւունքը յաղթողին են մնում և յաղթողին ամենքն ենթարկուում են։ Իսկ եթէ ջահիլներից մինը մտածէ ոչ թէ ընդդիմանալ, այլ միայն մի փոքր ապատ զգալ ու խրոխտալ, նրան իսկոյն կխաղաղացնեն. վզակոթին մի քանի ապտակ և սուր-սուր ատամներ. և խռովութիւնը կվերջանայ, հանգստութիւնը կը-թագաւորէ ու ամենքն իրենց խաղաղ ու սովորական կեանքին կնուիրուեն՝ միանգամայն հնազանդ առաջնորդին. սրան շողոքորթում ու աշխատում են հաճոյանալ, մանաւանդ էգերը, որոնք մաքրում, փաղաքշում, նոյնիսկ քթում են (վրայի միջատներն են որոնում ու հանում) նրան։

Հասկանալի է, որ ստորադրեալների կողմից եղած այսպիսի պատիւները արբեցնել, շշմեցնել կարող են առաջնորդին. և նա դառնում է հպարտ, մեծամիտ ու վերին աստիճանի ինքնահաւան։ Ասենք, այս պատիւները նրան արժան չեն նստում. նա պարտաւոր է շարունակ հոգալ, որ իր հասարակութիւնը միշտ ապահով լինի, նրա ուտեստի ամբարները միշտ լի մնան։ Նա պիտի որսի տեղն անի, սպասելի վտանգից նախազգուշացնի, թշնամու յարձակումների ժամանակ պաշտպանէ իր համայնքն ու զեկավարէ ընդհարում-

ները. մի խօսքով միշտ հակէ ու հետևէ ամեն բանի։ Ինչպէս տեսնում էք, այդ պատուաւոր պաշտօնն արժան չէ տրւում. պիտի շատ առաւելութիւններ ունենալ, պիտի սեփական գլխի ու ծնոտի ուժով ապացուցել այդ պաշտօնին արժանի լինելը։ Պիտի տեսնել թէ ինչ են անում կզակապիկները, երբ նրանց առաջնորդին հրսորդը սպանում է. առաջին բոպէներում ամբողջ հօտը բռնւում է սոսկալի լռութեամբ. նրանք շւարում են, չգիտեն ինչ անել։ Յանկարծ մի չտեսնուած աղմուկ են բարձրացնում, յուսակտուր ճիչով դէս ու դէն են ընկնում, ուժերը ներածին չափ ճղնից ճիւղն են ընկնում և աշխատում են որքան կարելի է շուտ փախցնել այն խստասիրտ թշնամուն, որ չխնայեց իրենց առաջնորդին։ Երբ կապիկների խումբն այնքան է մեծանում, որ մի առաջնորդը դժւարանում է կառավարել ու նրա պէտքերը հոգալ, այս դէպքում աւելի երիտասարդները բաժանւում, նոր առաջնորդ են ընտրում ու նոր խումբ կազմում։

Թէպէտ կապիկների լեզուն շատ հասարակ է, բայց նրանք շատ լաւ են հասկանում ու գործադրում այդ լեզուն։ Իրենց բազմազան զգացմունքները նրանք զանազան ձայներով են արտայայտում։ Այն առաջնորդը, որ ուժեղ ու ծղրտող ձայն չունի, նա առաջնորդ չէ, նա լաւ մտնչալ պիտի իմանայ, որ իր ստորադրեալներին վերահաս փորձանքից զգուշացնել կարողանայ։ Հէնց որ հնչում է առաջնորդի կատաղի ու խլացնող ձայնը, իսկոյն ամեն մէկը մի կողմ է փախչում, իսկ մայրերը՝ ձագերին առած, աշխատում են թագնուել մօտակայ ծառերի մէջ։ Ասենք լաւ կոկորդը երգելու էլ է հարկաւորւում։ Մի տեսակ Ամերիկայի կապիկներ կան, որոնց մռնչող անունն են տալիս. և նրանք միանգամայն արժանի են այդ անւանը. որովհետև իրենց զզւելի մռնչոցով անտառի բոլոր կենդանիների կեանքն են թունաւորում։ Աստուած ազատի այնպիսի հաւերգից, ուր 40 այդպիսի մռնչողներ են մասնակցում, որոնցից իւրաքանչիւրն աշխատում է իր սուր, ուժեղ, վայրենի ու խլացնող ձայնով փայլել։ Գլխներին դիպչի իրենց համերգը. բայց ինչ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/31 1922
ԱՄԵՆԻԱ, Мясников
Ա. ՄՅԱՍՆԻԱՆՑ

կասկած, որ մարդկանց ու կենդանիների [illegible] անտանելի համերգը մեծ բաւականութիւն է պատճառում իրենց՝ մռնչողներին։

Կերակրի համար եղած արշաւանքների ժամանակ առաջնորդը կզակապիկների հօտին մեծ օգուտ է տալիս.—նրա զգուշութիւնը, նախատեսող ոգին ու սուր ձայնը այդտեղ նոյն դերն են խաղում, ինչ որ զօրապետի մտածած հրամանները ընդհարումների, կռիւների ժամանակ։ Վայ այն գիւղերի բնակիչներին, որոնց շրջակայ անտառներում կապիկներ կան։ Արաբներն իզուր չեն ասում թէ. «մենք ցանում, կապիկները հնձում են»։ Արաբական շէյխն ի զուր չէ կապիկներին անաստուած անուանում և հաւատացնում, թէ մինչդեռ բոլոր հողագործները յարգում, պատւում են աստուծոյ առաքեալին, միայն կապիկներն են, որ արհամարհում են նրան։ Ահա այդ իմաստունի ծիծաղելի խօսքերը՝ «Երբ բերքերդ ու ստացւածքդ փղերից ու կապիկներից ազատելու համար անէծք ես զրում ու կախում դաշտերում, միշտ պիտի համոզւած լինիս, որ միայն փիղը կանսայ այդ անէծքին. նա արդարասէր կենդանի է. իսկ կապիկը Աստծոյ բարկութեամբ մարդուց հրէշ դարձած մի արարած է, սա սատանայի սերունդն է»։

Իզուր չէ Բրէմ գիտնականն ասում. «Այդ աւազակներից ոչնչով չի կարելի պաշտպանուել. ոչ փականքով, ոչ ետնափակով, ոչ ցանկապատով և ոչ պատերով. նրանք կարող են փականքը բանալ, պատերից իջնել. ինչ էլ չեն ուտում, հետներն են վերցնում, չխարելով նոյնիսկ ոսկի ու թանկագին քարեր։

Զէ՞ք ուզիլ արդեօք լսել, թէ ամենաանխիղճ կողոպուտի համար ինչպէս են մի անգամ կապիկներն արշաւանք գործել դէպի սիմինդրի ցանքերը. դա և՛ ծիծաղելի է, և՛ ցաւալի։ Ծիծաղելի մեզ համար, բայց նեգրերի համար, որոնց ցանքերն են ոչնչացողը, դա կատարեալ դժբաղդութիւն է։

Ահա կապիկների խումբն առաջ է շարժւում դէպի սի-

մինդրի արտերը. անտառում միայն մի թեթև շշուկ ու տերևների խշշոց է լսւում. դա առաջնորդն է, որ հանգստացնում է ճղների վրայով զգուշութեամբ առաջ արշաւող աւազակներին։ Նահապետ—առաջնորդը գնում է առջևից. նա շարունակ դիտում է իր շուրջը. երբեմն նոյն իսկ ծառն է բարձրանում, դիտում շրջակայքը և երբ համոզւում է թէ ոչ մի վտանգ չկայ, նոյնն ազդարարում է իր հօտին և թշւառականների հրոսակախումբն առաջ է շարժւում։ Էգերը տանում են նաև ձագերին և առաջնորդից խրախուսւած՝ յոգնածութիւն չեն զգում։ Վերջապէս վերջին ծառերը—և ահա սիմինդրի արտերը։ Ճարպիկութեամբ ծառերից ցած գալով, նրանք մեծ-մեծ, բայց վերին աստիճանի զգոյշ ոստիւններով դէպի ցանքերն են ուղղւում։ Առաջնորդն առջևումն է. նա միշտ դիտում ու հանգստացնում է։ Սկսւում է կողոպուտը։ Առաջին գործը լինում է լցնել «այտի ետևի» պարկերը. դա ամենաապահով տեղն է։ Անուշից նոյն իսկ երևում է, որ իւրաքանչիւր կղակապիկ այտի ետևում պարկ կամ բացւածք է ունենում, որտեղ հարկաւոր ժամանակը ժողոված աւելորդ պաշարն է պահում։ Դա թագցնելու ամենից ապահով տեղն է. որովհետև այնտեղից պաշար հանելը ոչ ոքի մտքով չի անցնիլ։ Ուրեմն հասկանալի է, թէ ինչո՞ւ են նախ այդ պահեստը լցնում։ Այնուհետև սկսում են մինը միւսի ետևից պոկել ու համտես անել սիմինդրի հասկերը։ Այստեղ արդէն այնքան չեն ուտում ու գողանում, որքան փչացնում են։ Հէնց դրա համար է, որ դաշտերի, այգիների ու բանջարանոցների տէրերը նրանց տանել չեն կարողանում։ Գողութեան ժամանակ առաջնորդը շարունակ բարձրանում է ետի ոտների վրայ ու դիտում շրջակայքը, իսկ փոքրիկ ձագերը խաղում են այնտեղ, արտից ոչ հեռու (նկ. 8)։ Ահա առաջնորդը ետին ոտների վրայ կանգնած գլուխը անհանգիստ կերպով շարժեց, զգուելի կնճիռները հաւաքեց ու զի՛ռ ձայն արձակեց։ Վտանգը քթի տակ է։ Էգերն իսկոյն շալակում են իրենց ձագերին, իսկ մնացածները սաստիկ շփոթութեան մէջ մի ակընթարթում մոտիկ անտառն են թափւում. այստեղ է նը-

րանց փրկութիւնը. այստեղ նրանց թագաւորութիւնն է. այստեղ-անտառում նրանք ոչ ոքից և ոչնչից չեն վախենում։ Դաշտատէրերն ահագին աղմուկ են բարձրացնում։ Բայց վտանգն անցած է. մեր կապիկները գոհ արշաւանքի յաջող

Նկար 8.

ելքից մի փոքր հանգստանում և նորից ուղղւում են նոյն տեղը՝ կողոպուտի։ Ամենից ուշագրաւն այն է, որ կապիկները փախչելիս էլ են ենթարկւում իրենց առաջնորդին. այստեղ էլ են իրենց յոյսն ամբողջապէս նրա վրայ դնում, այստեղ էլ են նրա հրամաններին համաձայն մեծացնում ու փոքրացնում իրենց քայլերը. նրանք հաւատացած են, որ նրա արթուն հովանու տակ իրենք ապահով են։ Սրանով պիտի բացատրել այս աւազակների այն հանգստութիւնն ու սառնարիւնութիւնը, որով նահանջում են վտանգի ժամանակ։

III

Կարելի է կարծել, թէ կապիկները բնաւորութեամբ վախկոտ են, դրա համար էլ երբէք թշնամու դէմ յանդիման չեն կանգնիլ. բայց դա սխալ կլինի.—կապիկներից միայն կզակապիկների պէս փոքր տեսակներն են, որ սուս ու փուս տեղի են տալիս թշնամուն: Մեծ տեսակները, ինչպէս օրինակ գարիլլան, օրանգը, նոյն իսկ պաւիանը, երկիւղ ու վտանգ ասածդ չգիտեն ինչ է: Ասիայի ու Աֆրիկայի ընկերները սարսափում են նրանց ահռելի ատամներից և ուժեղ բազուկներից: Ամենից անվախը գարիլլան է: Ոչ միայն մարդը, այլ նաև փիղը, առիւծը, լեօպարդն ու վագրը շատ անգամ են նրանից դաս առել. թշնամու վրայ յարձակելու համար գարիլլան ամեն բան ունի: Նոյնը կարելի է ասել օրանգի համար. պտուղներ, քար, փայտի կտորներ—յարձակման ժամանակ նրանց համար սովորական զէնքեր են. պատմում են նոյնիսկ, որ նրանք դագանակներով էլ են պաշտպանւում, որ շատ հմուտ ու վարպետ կերպով բանեցնել գիտեն. բայց սա մի քիչ անհաւանական է: Նեգրները գարիլլայի ու կատաղած օրանգուտանի անունը տալուց նոյն իսկ դողում են: Ահա թէ ինչ են պատմում գարիլլայի ատածների մասին այն նեգրները, որոնք գնացած են եղել փիղ որսալու: «Որսորդների խումբն ազատ թափառում է անտառում. յանկարծ նրանցից մինը գետնից կտրւում ու բարձրանում է.—դա ցածի ճղից կախ ընկած գարիլլան է, որ ետին ոտներով բռնելով մարդու պարանոցից, դէպ ինքն է քաշում. այդտեղից նա իր զոհի հետ միասին դէպի ծառի կատարն է բարձրանում, շարունակ սղմելով նրան, որ միանգամայն անպաշտպան է և նոյն իսկ օգնութիւն կանչելու հնարաւորութիւնից զրկւած. վերջապէս այնտեղից յանկարծ բաց է թողնում նրան. մարդն ընկնում է. նա խեղդւած, նա

մեռած է»: Նոյն իսկ զինուած մարդու կռիւը գարիլլայի հետ չափազանց վտանգաւոր է և շատ անգամ կապիկի յաղթութեամբ է վերջանում. Աստուած չանէ, եթէ յանկարծ զնդակը վրիպէ կամ միայն վիրաւորէ կապիկին. նա իսկոյն կընկնի որսորդի վրայ, ձեռքից հրացանը կխլէ, կծռմռէ, ու իր հուժկու ձեռքի մի հարուածով կճզմի մարդու կուրծքը կամ գանգը: Ահա մի այլ օրինակ, որ ցոյց է տալիս, թէ կապիկներն ինչպիսի՞ քաջութեամբ պաշտպանւել գիտեն թշնամուց:

Մի անգամ մի կապիկ հօտից բաժանւելով, մտնում է զօրանոց ու մի զինուորի զգեստ է գողանում: Շիպպ սպան, որ պատմում էր այս տարօրինակ դէպքի մասին, մի քանի զինուոր է հանում, որ հանեն յանդուգն գողին ու խլեն գողացած իրերը. մինչ այդ, կապիկն արդէն միացել էր իր խմբին: Զինուորներն աշխատում են զինուորական կարգով փակել այն այրի մուտքն, ուր կապիկները սովորութիւն ունէին թշնամուց պահւելու: Կապիկները զինուորներին տեսնելուն պէս խմբերի են բաժանւում. մի մասը բռնում է այրի մուտքն, իսկ միւսը կանգնում ու սպասում է թշնամուն. շատերը քարեր են հաւաքում. առաջնորդն ամենից շատ էր դէս ու դէն ընկնում և շարունակ բարկացած մնթմնթում էր. թւում էր, թէ ինչ որ հրամաններ էր տալիս: Զինուորները յարձակում են գործում. բայց այստեղ առաջնորդի ուած նշանով զինուորների վրայ քարերի այնպիսի տարափ է տեղում, որ նրանք ստիպւած են լինում հրաժարւել թէ կռուից, թէ գողացած իրերից: Հետաքրքիր է իմանալ, թէ կապիկներն իրար ինչպէս են վերաբերւում. օրինակ—ինչպէս են վերաբերւում արուներն էգերին:

Ամենից առաջ պիտի ասել, որ միևնոյն ցեղի կապիկներն ազատ ժամանակ իրար հետ բաւական հաշտ են ապրում, իսկ ուրիշ ցեղի կապիկների բոլորովին չեն սիրում. իսկ գերութեան մէջ ընդհակառակը՝ նոյն իսկ նրանց հետ բաւական հաշտ և սիրով են ապրում: Մի քանի զիտնականներ ու ճանապարհորդներ այս մասին շատ հետաքրքիր բաներ են պատմում. այսպէս. մի կապիտան իր նաւի վրայ

տարբեր ցեղերի պատկանող մի քանի կապիկներ է ունենում. նրանցից մինը շատ փոքրիկ ու զարճացնող էր. սա բռնելուց մի քանի օր յետոյ հիւանդացաւ. մնացած կապիկներն սկսեցին նրան խնամելու հերթն իրարից խլել. հիւանդին լաւ պահած լինելու համար նոյն իսկ իրար հետ կռւում էին. հիւանդի ցաւերը մեղմացնելու և գոնէ փոքր չափով հանգստացնելու համար նրանք ամեն բան անում էին.—խոհարարից գողանում ու նրա համար քաղցրաւենիներ էին բերում, գրկած ման էին ածում, գուրգուրում, իրենց կրծքին էին սեղմում և նոյն իսկ նրա ցաւերը տեսնելիս լաց էին լինում։

Մի անգամ էլ մի ուրիշ բան պատահեց.

Մասերի բաժանուած մի մեծ վանդակում մի քանի կապիկներ կային. դրանցից մինը հարևանի բաժնում ընկոյզ տեսաւ և մտածեց այնպէս գողանալ, որ հարևանն այդ չիմանայ, բայց հէնց նոր էր թաթը ներս մեկնել, որ ընկոյզի տէրը բռնեց ու կծեց այդ թաթը, կապիկը ճչաց, պահապանը վրայ հասաւ, խփեց վիրաւորողին ու հնարաւորութիւն տուաւ միւսին ազատելու իր թաթն այդ անսպասելի փորձանքից։ Փոքրիկ գողը ցաւից սկսեց հառաչել, թաթը կրծքին սեղմել ու վազվզել վանդակի մէջ։ Մի քանի րոպէից յետոյ առաստաղի կողմից ցած իջաւ մի ուրիշ կապիկ, որ մօտենալով, գրկեց ու սկսեց փայփայել նրան. նա քթի տակ ինչ որ փնթփնթում էր. կարծես մխիթարում ու հանգստացնում էր խեղճին. իսկ վերջինս երեսը դրաւ նրա կրծքին և, յիրաւի, կարճ ժամանակից յետոյ հանգստացաւ ու ախ ու վախը դադարեց։

Ահա մի ուրիշ պատմութիւն, որ ցոյց է տալիս թէ՝ առաջնորդը ինչպիսի ջերմութեամբ վերաբերւել գիտէ դէպի իր ընկերները։

Մի որսորդ անտառում կապիկների մի խմբի պատահեց. նա էգերից մէկին սպանեց ու գցեց իր վրանը, որ այդտեղից շատ հեռու չէր։ Մի փոքր անցնելուց յետոյ, որսորդը դուրս եկաւ և տեսաւ 40—50 կապիկներ, որոնք կատաղած

փնթփնթում էին, կարծես յարձակման էին պատրաստւում. սա անտառում պատահած խումբն էր։ Որսորդն ազատելու համար դուրս բերաւ հրացանը, որից նրանք վախեցան ու փախան։ Միայն առաջնորդը չվախեցաւ. նա շարունակեց մնալ իր տեղում, գոռգոռաց, դէմքը զզուելի կերպով ծռմռեց և սկսեց կատաղութեամբ ատամները կրճտացնել, այսպէս շարունակ մի քանի րոպէ։ Որսորդը չգիտէր նրա ուղածը։ Առաջնորդը տեսնելով, որ իրեն չեն հասկանում, աւելի մօտեցաւ վրանին ու սկսեց թաթը պաղատագին շարժել, կարծես ուզում էր որսորդին իր խնդիրը հասկացնել։ Վերջապէս որսորդը գլխի ընկաւ, սպանուածին դուրս բերաւ, տուաւ նրան։ Առաջնորդը վերցրեց դիակն ու գնաց իր ընկերների մօտ, որոնք հեռուում սպասում էին։

Միևնոյն ցեղին պատկանող կապիկներն իրար հետ շատ հաշտ են ապրում, չնայելով որ կուարար ու աղմկասէր լինելով, իրար շարունակ ապտակում, հարւածում, աքացիում են. բայց այս բոլորը միայն կատակներ են. հէնց այնպէս, տրամադրութիւնից առաջ եկած. դրանք մի տեսակ խաղեր ու մարզանքներ են. բայց հէնց որ հերթը թշնամուց իրար պաշտպանելուն է հասնում, ինչպէս տեսաք, անձնանձնուիրութիւն են ցոյց տալիս. մինը միւսի համար սարի պէս կանգնում ու ոչ մի վիրաւորանք չէ թոյլ տալիս։ Նրանք իրար շատ անգամ փաղաքշում, փայփայում էլ են։ Արժէ տեսնել թէ նրանք ինչպէս են իրար վրայից միջատներ ժողովում, մինը միւսին փշերից ու կոծոծներից մաքրում։ Այս բոլորը պիտի տեսնել համոզւելու համար, որ նրանք ոչ միայն հաւատարիմ ընկերներ, այլ և շատ զգայուն բարեկամներ էլ են։ Միայն մի պատճառ կայ, որ կարող է արունները իրար հետ թշնամացնել. դա էգերի ուշադրութիւնն ու փաղաքշանքը ձեռք բերելու համար եղած վէճերն են։ Ի դէպ մի քանի խօսք էգերի մասին։ Սրանք կատարելապէս արուներին են ենթարկւում ու նրանցից կախում ունեն. խմբերով ապրող ցեղերում էգերի կատարեալ տէր առաջնորդն է հանդիսանում։ Առաջնորդը վերին աստիճանի խանդոտ է և

այդ ասպարիզում մրցակից չէ կարողանում տանել, իսկ կանանց հետ սիլի-բիլի անող ջահիլներին կատարելապէս խելքի է բերում իր ահռելի ատամներով։ Այն դէպքում, երբ կապիկներն առանձին ընտանիքներով են ապրում, կանանց դրութիւնն անհամեմատ լաւ է. ճիշտ է, էգի հետ կենակցելու իրաւունքը կռւի մէջ յաղթողին է մնում և ոչ գեղեցկուհու ընտրածին, բայց առաջինի օրինաւոր կինը դառնալուց յետոյ, էգը վայելում է իր հաւատարիմ ամուսնու խնամքն ու պաշտպանութիւնը։ Նա է նրա պաշտպանը վտանգի ժամանակ և մխիթարողը ցաւի ու տխրութեան րոպէներին։ Որպէս զի պարզ լինի, թէ կապիկները բնութիւնից որքան զգայուն են, ես կպատմեմ թէ նրանք ինչպէս են խնամում իրենց ձագերին։

Կապիկն ընդհանրապէս ծնում է մէկ, երբեմն էլ երկու ձագ. այդ ձագից աւելի այլանդակ բան երևակայել դժւար է. դէմքը կնճիռներով ու ծալքերով ծածկւած մի կատարեալ հրէշ. բայց, տեսէք, թէ մայրն ինչպէս է սիրում. ուղղակի ուրախութիւնից գժւում է. էլ լիզ տալուն ու փաղաքշանքին վերջ չկայ. նրա խնամքը շատ անգամ ծիծաղի է հասնում. և ինչպէս չծիծաղել, օրինակ, հէնց այսպիսի մի տեսարանի առաջ. ձագը գրկում նստած է մայրը. նրան լպստում, կրծքին է սեղմում, վեր-վեր է գցում, քթւում է, վերջապէս օրօրում է։ Կամ մի այլ տեսարան. ձագը քնած է, իսկ մայրը նրան անհանգստացնող միջատներն է քշում։ Ձագն ապրում է մօր հետ. նա առաջի ոտներով մօր վզին փաթաթւած, իսկ յետիններով կողքերին կպած, կախ է ընկնում մօր փորից ու այդ դիրքով ծիծ է ուտում։ Երբ մի փոքր մեծանում է, հետզհետէ ինքնուրոյնութեան է սովորում. բայց այս դէպքում էլ մայրը նրան իր աչքի լոյսի պէս է պահում և վտանգ պատահած ժամանակ ինքն է շտապում նրան թոցնել, եթէ ձագը չի շտապում մօր շալակը բարձրանալ։ Ձագի անհնազանդութիւնը խիստ պատժւում է. և չնորհիւ այդ հանգամանքի, երեխաները միշտ հնազանդ են իրենց մօրը։

Մի քանի ճանապարհորդներ գիբբոնների կեանքից շատ

հետաքրքիր դէպքեր են պատմում. նրանք պատմում են թէ ինչպէս «մայրերը ձագերին ջուրը տանելով, չնայելով վերջիններիս ճըճւոցին, այնպէս մաքուր լողացնում են, որ մեր երեխաներից շատերը կնախանձէին այդ մաքրութեանը»։ Թշնամու յարձակման ժամանակ ծնողների անձնուիրութիւնը սահման չունի. եթէ ձագը վիրաւորուեց, մայրը նրան երբէք չի թողել. կամ ինքն էլ կմեռնի, կամ, եթէ կարողացաւ, իր աչքի լոյսին էլ կվերցնի ու դէպի մօտակայ թփերը վազելով, կաշխատի իր գիտեցածին չափ օգնել նրան։ Ահա գարիլլաների կեանքից ասածս ապացուցող մի օրինակ (նկար 9)։

Մէկ անգամ որսորդները մի ընտանիքի վրայ յարձակուեցին. դա կազմւած էր մօրից և 2 ձագերից. մայրը ձագերից մինին ծառը հանեց, իսկ միւսն անշուշտ որսորդի ձեռքը կընկնէր, եթէ մայրը չլինէր, որ վազեց, նրանց գրկեց ու մայրական կատաղութեամբ որսորդների վրայ յարձակուեց. որսորդները հրացանները նշանի բռնեցին։ Զգալով մօտահաս վտանգը, մայրը կանգ առաւ, ձեռքերը բարձրացրեց —կարծես աղաչում էր խնայել, կամ փորձում էր ճակատագրական հարւածից պաշտպանուել. բայց գնդակը պատռեց մայրական կուրծքը և միայն այդ ժամանակ որսորդները տիրացան ձագին։ Ահա ճանապարհորդի պատմածը, իսկ այսպիսի պատմութիւններ որքան կուզէք։ Անազատ ժամանակ մայրն իր ձագի հետ աւելի է կապւում։ Տեսնել այդ հոգն ու խնամքը, տեսնել թէ ինչպէս է անձնւէր մայրը ամեն մի պատառ բաժանում իր ձագուկի հետ և խորին յարգանք չզգալ դէպի մայր-կապիկի սրտում բորբոքւող սէրը, անկարելի է։ Ուրիշ ինչ կուզէիք.—երբ ձագը մեռնում է, շատ անգամ մայրն այդ ցաւը չտանելով, ինքն էլ է մեռնում։

IV

Առհասարակ շատ հետաքրքիր է այն, որ ցոյց են տալիս կապիկները դէպի իրանց որդիներին ու միւս կենդա-

նիները։ Ամենից առաջ կխնդրէի յիշել, որ կապիկներին ուսուսումնասիրելը, երբ նրանք ազատ են, շատ դժուար է, դրա համար էլ նրանց կեանքի ամենահետաքրքիր դէպքերը պատմում են այն գիտնականները, որոնք նրանց ուսումնասիրել



Նկար 9. Գիբբոն.

են այդ ազատութիւնից զրկուած ժամանակը։ Այժմ լսէք։ Օրանգ-ուտանի մինը երկու կատուի ձագ էր սիրում. միշտ նրանց հետ էր և խնամում էր նրանց, երբեմն գլխին էր դնում, երբեմն կռնատակն առնում։ Քիչ չէր պատահում,

երբ փոքրիկ գազանները անխիղճ կերպով չանգռելով նրան, ցաւ էին պատճառում, բայց օրանգը չէր յուսահատւում. նա այդ վտանգը հեռացնելու համար լաւ քննեց իր սանիկներին և ուզեց նրանց եղունգները քաշել, այդ նրան չյաջողուեց։ Այնուամենայնիւ նա շարունակեց սիրել, նրա համար այդ ցաւեր տանելը աւելի հեշտ էր, քան նրանց ընկերութիւնից զրկուելը։

Մի ուրիշ կապիկ, որին շղթայաւով տանում էին, սերտ կապ հաստատեց նոյն շղթայաւով գնացող մի նեգր աղջկայ հետ։ Նաւաստիները ծիծաղից թուլանում էին, երբ տեսնում էին թէ՝ ինչպէս նա աղջկանը նստեցնելով տախտակամածի վրայ, պաքսիմատ էր տալիս, մի բան, որ ինքն էլ պակաս ախորժակով չէր խժռում։

Բայց այս բոլորը ոչինչ են այն պատմութիւնների առաջ, որ առաջ է բերում Բրէմ, իր կապիկների կեանքից։ Կոկօ, Հասսան, Պէրրօ և Ատիլիա—ահա այն փոքրիկ հերոսների անունները, որոնք նրան այնքան բաւականութիւն են պատճառել. ասենք իրենց անսպասելի չարութիւններով նոյնքան և անբաւականութիւն։ Կոկօն և Հասսանը կզակապիկներ էին, իսկ Պէրրօն և Ատիլիան խսկական պաւիաններ։ Սրանք բոլորն էլ ազատութիւնից զրկուած էին և իրենց տիրոջ բարեկամութիւնից ոչ մի բաւականութիւն չէին զգում. դրա համար բուռն կերպով աշխատում էին կենդանիներից իրենց համար հաւատարիմ բարեկամներ, որդեգիրներ ու գոնէ ժամանցի ընկերներ ձեռք բերել։ Բայց այդ բանը բոլորին չաջողուեց. իրենք էին մեղաւոր. կուարար ու անհաստատ բնաւորութեան տէր լինելով, նրանք զրկւում էին լաւ բարեկամներից և ուրախ խօսակիցներից. օրինակ. Պէրրօն բոլոր կենդանիների հետ բարեկամ էր, բացի Ջայլամից, որին ընաւ տանել չէր կարողանում և շարունակ աշխատում էր վիրաւորել նրան. ինչո՞ւ, գիտե՞ք—որովհետև Ջայլամն ինքը նրան շատ էր չարչարում, կոցահարում էր հէնց այնպէս, առանց պատճառի, իր յիմարութիւնից, որովհետև կապիկը երկար պոչ ունէր։

Մի անգամ Պէրրօին (նկար 10) մի շատ հետաքրքիր դէպք պատահեց. նա իր տիրոջ հետ ֆուրգօնով մի ուրիշ քաղաք էր գնում. քաղաքի մուտքի մօտ նա մի նոր ցնցնած շուն տեսաւ՝ իր լակոտների հետ միասին. իսկոյն ցած թռ-

Նկ. 10. Պաւիանցներ.

ռաւ ֆուրգօնից, շան լակոտներից մինին վերցրեց և ուզեց փախցնել. բայց կատաղած շունը վրայ պրծաւ և կերևի կապիկը չէր ազատուիլ նրա սուր ատամներից, եթէ չլինէր ֆուրգօնի տէրը, որին դիւր էր եկել Պէրրօի վարմունքը— նա ոչ միայն հալածեց շանը, այլ և լակոտը Պէրրօի մօտ

թողեց։ Այդ լակոտը նրա սիրելին դարձաւ. բայց ձեռքիցը շուտով խլեցին, որովհետև Պէրրօն շատ սիրելուց ոչ միայն ինքը ուտելու չէր տալիս նրան, այլ և խլում էր այն կերակուրը, ինչ որ շան համար էր տրւում։ Աւելի ծիծաղելի էր էգ պաւիան Ատիլիայի և կզակապիկ Հասսանի բարեկամութիւնը։ Ատիլիան առհասարակ շան ու կատուի ձագերից որդեգիր ունենալը սիրում էր։ Կատուիկների ճիրանների հետ նա աւելի լաւ հաշիւ էր տեսնում, քան մեր յիշած օրանգուտանը. նա կրծում էր այդ եղունգները։ Բայց և այնպէս նրա գլխաւոր սիրելին Հասսանն էր. ասենք Հասսանն էլ իր կողմից շատ կապած էր Ատիլիայի հետ։ Նա թոյլ էր տալիս, որ Ատիլիան իրեն իբրև երեխայի խնամէ, երեխայի պէս հնազանդւում ու տանում էր նրա բոլոր յիմար քմահաճոյքը. Ատիլիան էլ, իբր վարձատրութիւն, իր փայփայանքը, փաղաքշանքն ու խնամքն էր շռայլում.—գրկում, մանէր ածում, օրօրում, մաքրում էր և այլն։ Բայց ամենից ծիծաղաշարժը նրանց ընթէն էր։ Հասսանը պարկում էր Ատիլիայի թևերի վրայ, ամուր գրկում էր նրան, և այդպէս խոր քուն էին քաշում։ Պէտք է ասած, որ Հասսանի սէրն աւելի զօրեղ էր, քան Ատիլիայինը։ Հասսանն ամեն տեղ յետևում էր Ատիլիային, առանց նրան մի քայլ չէր անում, բերնի պատառը նրա հետ կիսում էր, և նոյն իսկ անտրտունջ տանում էր այն հարուածներն ու քոթակը, որ յաճախ Ատիլիան հասցնում էր նրան։ Բաւական էր, որ խեղճ Հասսանը բերանը մի բան դնէր առանց Ատիլիայի բաժին հանելու, իսկոյն անկարգ պաւիանը վրայ կընկնէր, ինչպէս ասում են բերանը կմտնէր, պատառը կհանէր, վերջումն էլ կթակէր ու կանպատուէր խեղճին։ Այս երկու դէպքերն էլ ցոյց են տալիս, որ աշխոյժ կզակապիկներն աւելի ուժեղ սիրել գիտեն և իրենց բարեկամների հետ աւելի անկեղծ կերպով են կապուում, քան թէ չար ու հոտած պաւիանները։ Այդ կողմից հրաշալի օրինակ կարող է լինել Բրէմի Կոկօ անունով փոքրիկ կզակապիկը։

Կոկօն իր ազատութիւնը կորցնելուց յետոյ, մարդկանց

վրայ շատ խէթ աչքով էր նայում. իսկ կենդանիների հետ, ընդհակառակը, շատ շուտ մտերմացաւ: Ամենից շուտ նա բարեկամացաւ մի յիմար, բայց բաւական բարի թռչունի հետ, որ նոյն անտառներից էր, որտեղից Կոկոին էին բերել: Ինչպէս երևում էր, թռչունների այս տեսակը նրան դեռ անտառներից ծանօթ էր. ամբողջ օրերով քաշ էր գալիս նրա հետ և, պիտի ասած, թռչունն էլ նրա բոլոր յիմարութիւններն ու չարութիւնները սիրով էր տանում: Օրինակ, թռչունի փետուրների մէջ միջատ որոնելուց էլ ծիծաղելի բան. այն ինչ Կոկոն առանձին բաւականութեամբ էր նուիրւում այդ գործին. թռչունն էլ ոչ միայն չէր ընդդիմանում, այլ դիտմամբ մօտենում, թևերը փռում էր, կարծես խնդրելով, որ Կոկոն քթէ իրեն: Մի խօսքով, նրանք շատ բարեկամաբար էին ապրում: Վերջապէս թռչունը սատկեց: Առանց բարեկամի Կոկոն շատ տխուր էր. սկսեց նորերը որոնել. փորձեց կատուի ձագերի հետ բարեկամանալ, բայց դրանք չբարեհաճեցին. ի՞նչ արած. մնում էր սպասել ու կարօտել: Վերջապէս ցանկալի բարեկամը գտնուեց: Կոկոն այս անգամ մի փոքրիկ կապիկ որդեգրեց. նրա ուրախութիւնն անսահման էր: Բայց աւելի լաւ է թող Բրէմն ինքը պատմէ որդեգրելու, սերտ ու անկեղծ բարեկամութեան այս հետաքրքիր դէպքը. ահա նրա խօսքերը. «Փոքրիկին տեսնելով, նա (Կոկոն) շատ ուրախացաւ. և թաթը դէպի նա մեկնեց. մենք փոքրիկին բաց թողինք թէ չէ, իսկոյն Կոկոի մօտ վազեց. Կոկոն իր փայփայանքով քիչ էր մնում խեղդէր խեղճին.—ամուր սեղմեց, ուրախ-ուրախ մրթմրթաց և իսկոյն սկսեց մորթին մաքրելու գործը. բոլոր փշերն ու կոճոճները պոկոտեց, առաջ եկան նոր գրկախառնութիւններ ու սիրող սրտի նոր ապացոյցներ: Եթէ մինը փորձում էր վերցնել նրա որդեգրին, այդ դէպքում նա կատաղում, տրխրում ու անհանգստանում էր, կարծես հարազատին կորցրած լինէր: Նա այդ որբի համար կատարեալ մայր դարձաւ: Որդեգիրն էլ նուիրւեց իր բարերարին և ըստ ամենայնի լսում էր նրան: Զը նայելով այդ խնամքին, դժբաղդաբար մի քա-

նի շաբթից յետոյ փոքրիկ որբիկը մեռաւ»: Այս կենդանի պատմուածքին ոչինչ չունեմ աւելացնելու. մնում է միայն վերջակէտ դնել և անցնել յաջորդ գլխին:

V

Այժմ խօսենք մի քանի մարդանման կապիկների—գարիլլայի, շիմպանզէի, և օրանգ-ուտանի մասին. սկսենք առաջնից: Ուժեղ, թիկնաւէտ իրանի վրայ նստած է նրա գլուխը նեղլիկ, թեք ճակատով, զզզուած մազերով, տափակ քթով, հաստ շրթունքներով և համեմատաբար փոքրիկ ականջներով: Նրա մարմինը ծածկուած է կոկ, երկար ու խիտ մազերով. երեսի կաշին, սկսած յօնքերից մինչև կզակը բոլորովին լերկ է. այդպէս է նաև ականջների, ձեռքերի ու ոտների թաթերի կաշին: Գարիլլայի ծնոտները զարգացած են. դրանց վրայ նստած են նրա խոշոր ու սուր ատամները, որոնցից աւելի առաջին մեծ-մեծ ժանիքներն են: Այդ ժանիքները նման են առիւծի, վագրի, գայլի ժանիքներին: Այս կենդանու ուժեղ, ջլոտ, և բաւական կանոնաւոր զարգացած ձեռն ու ոտը, հարթ ու սև երեսը, խոշոր, թուխ ու խելօք աչքերը գարիլլային շատ են նմանեցնում մարդուն, աւելի ճիշտ սեամորթ վայրենի նեգրին (նկ. 11): Գարիլլան ապրում է խիտ անտառում, թէպէտ իր ժամանակի մեծ մասն անց է կացնում ոչ թէ ծառերի, այլ գետնի վրայ. ծառ բարձրանում է միայն պտուղներ քաղելու ժամանակ. նա իր նման գարիլլաների հետ ժամանակ անցկացնել չէ սիրում. աւելի նախապատուութիւն ընտանեկան առանձնացած կեանքին է տալիս: Դրա համար էլ նրան միշտ կարելի է տեսնել անտառում կամ բոլորովին մենակ, կամ էգի ու ձագի հետ: Ցերեկը բաւական մաս գալուց յետոյ, գիշերը ծառն է բարձրանում ու այնտեղ ընտանիքով գիշերում. նա իր էգի համար շատ է հոգում, մանաւանդ երբ նա յղի է:

Այդ ժամանակ արուն չոր ճղներից խրճիթ է շինում, ուր էգը մինչև ծնունդն ապրում է։ Բայց հէնց որ էգը մի փոքր կազդուրուում է, թողնում է իր ընակարանն ու միանում արուին, որն այժմ սաիպւում է ոչ միայն էգին պահպանել, այլ և իր անպաշտպան ձագուկին։ Գարիլլան շատ ուժեղ է, քաջ ու բարկացկոտ. բայց նա մարդու հանկից երբէք չի ընկնիլ, եթէ վերջինս չը-բարկացնէ նրան։ Իսկ եթէ մի փոքրը բարկացրեց, այն ժամանակ Աստուած ազատէ. նա ետի ոտների վրայ կանգնում, ատամները կըրճատացնում, կատաղարար մռընչում և բռունցքով կուրծքը ծեծում է։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ գարիլլան իր կուրծքը ծեծում է ոչ միայն կատաղութիւնից, այլ որովհետև այդ նրան բաւականութիւն է պատճառում։ Առհասարակ նա իր ուրախութիւնն ու բաւականութիւնն արտայայտում է կամ ծափ տալով կամ ինչ որ վայրենի պարով. որի ժամանակ միևնոյն տեղում կանգնած անճոռնի պտոյտներ է անում ու ծիծաղելի գլխկոնծիներ է տալիս։

Նկար 11 Գարիլլա.

Մեր երկրում գարիլլան երկար չէ ապրում. այստեղ նրա համար շատ ցուրտ է. ուրեմն հասկանալի է, թէ ինչու հէնց որ գարիլլան Եւրոպայ է ընկնում, աշխատում են ամեն կերպ պահպանել նրան, որպէս զի հնար լինի երկար ապրեցնել և նիստ ու կացն ուսումնասիրել։ Մի գարիլլայ ընկել էր Բերլինի կենդանաբանական այգին։ Տեսուչը նրան լաւ էր պահում և գիտէր նրա բոլոր սովորութիւնները. ահա թէ ինչ է պատմում նա իր գարիլլայի մասին։

Նա մօտ 2 տարեկան էր, իսկ հասակով հաւասար 3 ֆուտ. սիրով լինում էր հասարակութեան մէջ, տարբերում էր մեծին ու փոքրին, կանանց ու տղամարդկանց. 2—3 տարեկան երեխաներին շատ քնքոյշ էր վերաբերուում, բաւականութեամբ համբուրում և թոյլ էր տալիս, որ իրեն ինչ ուզում են անեն։ Իսկ մեծերի հետ նա վատ էր վարուում. չնայելով, որ նրանց հետ էլ էր խաղում սիրով, ետևներից էր ընկնում, որի ժամանակ սեղան-աթոռները անզգուշութեամբ շրջում, իրար գլխով էր տալիս, սակայն նոյն այդ խաղի ժամանակ նրանց ոտը բռնելուց ու իր սուր ատամների ուժը նրա վրայ փորձելուց ամենևին չէր քաշւում։ Բնաւորութեամբ մարդուն նման լինելով, նրա պէս էլ ապրում էր։ Առաւօտեան ժամի 8-ին անկողնից վեր էր կենում, տեղերում ուղիղ նստում, յօրանջում, մարմինը քօրում, և այնքան էր սպասում, մինչև որ կաթն էին տալիս, որ սովորաբար բաժակով էր խմում։ Այդ ժամանակ բոլորովին թարմացած, թողնում էր անկողինը, պատուհանից դուրս էր նայում, ծափ էր տալիս ու սկսում էր խաղալ պահապանի հետ։ Ժամի 9-ին երեսը լւանում էին. այդ նրան շատ էր դուր գալիս։ Իր պահապանի մշտական ընկերը լինելով, նրա հետ էլ ուտում էր։ Նա ոչ մի բանից չէր զզւում և պահապանի կերածն ինքն էլ էր ուտում։ Ճաշից յետոյ հանգստանալ սիրում էր. 1—1½ ժամ քնելուց յետոյ վեր էր կենում և նորից պատրաստ էր խաղալու։ Երեկոյեան ժամի 9-ին գնում էր քնելու. դօշակի վրայ պարկում ու վերմակով փաթաթւում էր. պահապանը, մօտը նստում էր, մինչև նրա քը-

նելը, որ շնորհիւ նրա սաստիկ քնկոտութեան, շատ էլ չէր ուշանում։ Շատ սիրում էր քնել իր պահապանի հետ նոյն մահճակալի վրայ. նա պահապանին գրկում ու գլուխը վրան էր դնում։ Շատ խոր քնել գիտէր և ժամի 8-ից շուտ չէր արթնանում։

Միւս մարդանման կապիկը—շիմպանզէն, աւելի հանդարտ ու համեստ է, քան գարիլլան. այդ երևում է նրա դէմքից, որ աւելի է նման մարդու դէմքին. ճակատն այնքան փոքր չէ, որքան գարիլլայինն էր, իսկ աչքերն աւելի պարզ ու բարի արտայայտութիւն ունեն։ Շիմպանզէի քիթն ու շրթունքները բաւական հաստ են. մազերը կզակի վրայ կարճ են ու սպիտակ, իսկ մարմնի վրայ սև ու գանգուր. բաւական երկար են ծոծրակի, մէջքի ու թիկունքի մազերը, իսկ գլխինը կանոնաւոր կերպով երկու մասի է բաժանուած։ Իրանը տակաւի է նման—թիկունքը լայն, կուրծքը նոյնպէս սակայն աւելի նեղ քան փորը։ Ձեռքերն այնքան երկար են, որ ծնկներից էլ ցած են իջնում. ուժեղ են, թէպէտ աւելի թոյլ, քան թէ գարիլլայինը։

Շիմպանզէն, ինչպէս և գարիլլան, ընդհանրապէս անտառումն է ապրում, այլ էլ միայնակ. նրանցից 8—10 հատին հազիւ կարելի է միասին պատահել։ Իր ընտանիքի համար նա բուն է հիւսում բարձր ծառերի վրայ։ Չէ կարելի ասել, թէ նա առանձնապէս գնահատում է այդ բնակարանը. եթէ մօտ տեղերում հարկաւոր քանակութեամբ կեր չգտաւ, նա իսկոյն կթողնի և աւելի յարմար տեղ կորոնի։ Ընդհանրապէս մի ծառի վրայ մէկ ընտանիք է բուն դնում. ասենք ճանապարհորդները մի ծառի վրայ 2—3 բուն էլ են տեսել, բայց դա շատ հազուադէպ երևոյթ է։

Մարդու մօտ ընկնելուց յետոյ, շիմպանզէն շատ շուտ է ընտելանում ու կապւում իր տիրոջ հետ. ահա հէնց այստեղ էլ երևան է գալիս նրա ուսանելի, բարի բնաւորութիւնն ու մեծ ընդունակութիւնը։ Մարդու իւրաքանչիւր հրամանը նա սիրով է լսում ու կատարում, եթէ միայն դա անմիտ չէ։ Երեխաներ սիրում է ու նրանցից չի նեղանում.

ընդհանրապէս ուրախ է և զբաղւող, բայց երբեմն էլ, երբ դիտմամբ չարացնում են, նեղանում և կամակորութիւններ է անում.—պարկում է յատակին և ձեռքերով ու ոտքերով տուր թէ կտաս, պոկոտում է գլխի մազերը, չանգռտորում է դէմքը։ Մարմնամարզական խաղեր շատ է սիրում և ճիշտն ասած այդ բանում բաւական վարպետ է (նկար 12)։

Նկ. 12. Շիմպանզէ.

Մարդու մօտ մի քիչ ապրելուց յետոյ, շիմպանզէն նրանից շատ բան է սովորում.—փայտ է բերում ու վառարանում դարսում, իր վանդակը սրբում է, լւածքը փռում է, անկողինը դցում ու ժողովում է, զանազան առարկաներ տեղից տեղ է տանում. դունչը սրբում է անձեռոցիկով, պնակով կերակուր է ուտում, երբեմն նոյնիսկ գդալ, դանակ ու պատառաքաղ է գործ ածում, բաժակից խմում է և այլն։

Մի բանից զոհ եղած ժամանակ ժպտում, նոյն իսկ բարձր ձայնով ծիծաղում է։

Շպրէխտ անունով մէկը պատմում է թէ ինչպէս էր ծիծաղում շիմպանզէն, երբ ինքը նրան վեր ու վայր էր գցում կամ խուտուտ էր ածում։

Հնդկաչինից հարաւ, ովկիանոսի խոր ջրերում երկու մեծ կղզիներ կան—Սումատրա և Բօրնէօ։ Այդ կղզիներում, և կարծեմ այլ ևս ոչ մի տեղ, ճահճոտ տեղերում, ուր խիտ անտառներ էլ կան, մի տեսակ մարդանման կապիկ կայ, դա կոչւում է օրանգ-ուտան, որ մեր լեզուով անտառի մարդ է նշանակում։

Օրանգ-ուտանը Աֆրիկայի անտառներում ապրող գորիլլայից և շիմպանզէից տարբերւում է. ամենից առաջ աչքի են ընկնում նրա երկար ձեռները, որոնք քիչ է մնում գետնին հասնեն, երբ նա կանգնում է ետի ոտների վրայ։ Գլուխն էլ այնպէս չէ, ինչպէս միւս մարդանման կապիկներինն էր. գանգը ձգւած է, դունչը կարծես աւելի առաջ եկած է, իսկ շրթունքները մեծ-մեծ են ու հաստ։

Նրա բունը լայն է, փորը մեծ ու առաջ եկած. պարանոցը կարճ է և առջևից ծալքեր ունի, որովհետև այդտեղ է նրա կոկորդային մեծ պարկը, որ նայելով օրանգի գոռալու ուժին, մեծանում ու փոքրանում է. բուրդը շէկ-մոխրագոյն է, մէջքի վրայ կարճ ու սեհրակ, իսկ կողքերին՝ երկար ու թաւ. գլխի վրայ դէս ու դէն է ցրւած, իսկ երեսին կանոնաւոր ու կոլորակ մօրուքի է նման (նկար 13)։

Ինչպէս գորիլլան ու շիմպանզէն, նոյնպէս և օրանգը իր բունը շինում է ծառի ճղներից. այդ գործը նա շատ արագ ու ճարպիկ կերպով է կատարում.—ծառը բարձրանալով կոտրտում, իրար վրայ խաչաձև դարսում է այդ ճղները և 15 րոպէ չանցած՝ բունը պատրաստ է, ուր նա կարող է ուզածին պէս տեղաւորւել ու հանգստանալ։ Ինկատի ունեցէք, որ նա ծառից ցած գալ չէ սիրում. միայն ջրի ու կերակրի պակասութիւնը կարող են նրան այդ բանն անել տալ. այլապէս նա իր ժամանակի մեծ մասն անց է կաց-

նում ծառերի վրայ, ուր նոյնքան լաւ է վազվզում, որքան միւս կենդանիները գետնին։ Երբ ստիպւում է ցած գալ, այդ դէպքումն էլ 4 ոտի վրայ է ման գալիս. ետի ոտների վրայ երբեմն է բարձրանում, այն էլ այն դէպքում, երբ յարձակւում են վրան և լուրջ կերպով պիտի պաշտպանուի։ Բնաւորութեամբ քիչ է տարբերւում միւս մարդանմաններից.



Նկար 13. Օրանգ-ուտան.

բայց և այնպէս մի քանի օրանգուտանների բնաւորութեան մասին կխօսենք, միայն մի փոքր յետոյ։

Այժմ հարկաւոր եմ համարում ասել.—թէ գորիլլան, թէ շիմպանզէն, թէ օրանգ-ուտանը պոչ չեն ունենում. ուրեմն դրա անպոչ կապիկներ են։

VI

Բաւական է միայն նայել կապիկի շարժուն և շարունակ ծռմռող դէմքին, և հաստատ կարելի է ասել, որ կապիկները մեծ խելք ու ընդունակութիւններ ունեն։ Աւելցրէք լաւ յիշողութիւնը և նմանելու, «կապիկութիւն անելու» անյաղթելի պահանջը և դժուար չի լինիլ հասկանալ այն զարմանալի պատմութիւնները, որոնց մէջ փայլում են կապիկների անմահ կարողութիւնները։ Ինչից սկսենք. կուզէք հէնց այնտեղից, թէ կապիկն ինչ բանի կարող է վարժուել։ Երբէք չէ՞ք տեսել՝ թէ ինչպէս կապիկը շոտլանդական պոնիի վրայ նստած թռչում և այ՛ պիսի շարժումներ է անում, որ ցիրկի մի լաւ ձիաւոր կարող էր անել։ Ո՛չ, չէ՞ք տեսել. ես գոնէ տեսել ու ծիծաղից թուլացել եմ։ Գոնէ չէ՞ք տեսել թէ ինչպէս կզակապիկը՝ խոհարարի հագուստում, գոգնոցը կապած, սպիտակ թասակը գլխին, ծառայում է ճաշող փղին. այդ աւելի ծիծաղելի է։ Կապիկը որքան ջահիլ է, այնքան աւելի խելօք է. ծերութեան օրերում ընդհանրապէս աւելի է յիմարանում ու չարանում։ Այդ կողմից ջահիլ շիմպանզէներն ու օրանգները աւելի հետաքրքիր են։ Դրանց մասին այնպիսի բաներ են պատմում, որ անկարելի կլինէր հաւատալ, եթէ այդ պատմողներն ամենավստահելի մարդիկ չլինէին, վերցնենք, օրինակ, մի ջահիլ շիմպանզէ, որի մասին պատմողը շոգենաւի կապիտան է։ Նա շատ վարպետօրէն նաւաստիի ծառայութիւններ էր կատարում.—առագաստ ու խարիսխ էր թողնում ու նորից ժողովում. սովորել էր վառարանները վառել և նոյն իսկ նրանց փակելու ժամանակը լաւ գիտէր։ Ֆրանսիացի գիտնական Բիւֆֆոնը մի շիմպանզէ ունէր, որ շատ նման էր մարդու։ Մենակութիւնը և անաղատ կեանքն, ինչպէս երևում է, նրա համար շատ ծանր էին, որովհետև միշտ լուռ ու տխուր էր։ Նա

շատ քաղաքավարի էր. բաւական նուրբ ձևեր ունէր և սիրում էր ամեն տեսակ յարմարութիւն. Բիւֆֆոնի բոլոր հիւրերին ձեռք էր տալիս, ճաշի ժամանակ սեղան էր նստում. անձեռոցիկ էր կապում ու գործ ածում, իրեն համար գինի էր ածում ու կենաց բաժակ խփում. պնակ ու բաժակ պատրաստելով իր համար թէյ էր շինում, որ նախ քան խմելը սառցնում էր։

Իւրաքանչիւր նորութիւնից զարմանում էր, կարծես վայրենի լինէր։ Մի շիմպանզէ մի օր հայելում իր պատկերը տեսաւ. նա շատ զարմացաւ. սկսեց շարունակ նայել, ծամածռութիւններ արաւ, փորձեց շոշափել իր պատկերը. և հանգստացաւ միայն այն ժամանակ, երբ հայելին հեռացրին։ Բայց իմ կարծիքով աւելի ծիծաղելին այն շիմպանզէն էր, որ հիւանդ ժամանակ թաթը բժշկին մեկնելով, խնդրում էր արիւն առնել, որովհետև մի ուրիշ անգամ հիւանդացած ժամանակ այդպէս էին վարուել։ Պակաս ուսանելի չեն օրանգ-ուտանների կեանքից եղած պատմութիւնները. օրինակ, Բրէմի պատմածը մի արու օրանգ-ուտանի մասին։ «Նա, ինչ որ տալիս էին, ուտում էր. բայց արմտիք ու կանաչեղէնները նախադասում էր. մեծ բաւականութեամբ էր ուտում նաև տապակած միս ու ձուկն. սովորական խմելիքը ջուր էր, սակայն գինին էլ մեծ ախորժակով էր խմում. խմելուց յետոյ ձեռքով շրթունքները սրբում էր, ինչպէս շատ մարդիկ անում են. նոյն իսկ ատամքորիչ էր գործ ածում։ Գրպանից գողութիւն անելու մէջ շատ ճարպիկ էր և քաղցրեղէններ այնպէս էր հանում, որ գրպանի տէրը չէր նկատում։ Քնելուց առաջ իր տակի խոտն ուղղում, փափկացնում էր, մի խուրձ էլ գլխի տակն էր դնում ու վերմակով փաթաթւում։ Նրան շոր էին տալիս և նա առանց շոգն ու ցուրտը տարբերելու, երբեմն գլխին էր փաթաթում, երբեմն մարմնին։ Իսկ երբ կատուի ձագ էին տալիս, նա տանում, խնամքով հոտոտում էր։ Մի անգամ կատուիկը չանդուեց նրա թաթը. կապիկը դէն գցեց, նայեց վերբին և այլ ևս կատուին տեսնել չէր ուզում։ Նա վարպետ կերպով կա-

ալոցներ էր բանում, իսկ աւելի բարդ կշռու

՝ (կապերը) ատամներով էր արձակում. այս պարապմունքը նրան մեծ բաւականութիւն էր պատճառում և նա շարունակ կոշիկների կապիչներ էր արձակում։

Մաքրասիրութիւնը օրանգ-ուտանների սովորական լաւ յատկութիւններից մէկն է։ Նրանցից մինը մինչև իսկ մաքրութիւնն ամեն բանից շատ էր սիրում.—վանդակի աղբը մաքրում, յատակը թաց շորով լւանում էր. ինքը մարդու պէս լւացւում էր։ Մի քանիսն էլ աչքի էին ընկնում սիրալիր բնաւորութեամբ.—ի նշան անկեղծութեան ու բարեկամութեան համբուրում էին իրենց տէրերին ու ծառաներին։

Բայց դժուար թէ մէկն ու մէկն այնքան խելացի լինէր, որքան Բօբին, որ մի քանի ամիս շարունակ ճանապարհորդում էր շոգենաւով։ Բօբին օրանգների մէջ նոյնքան նշանաւոր է, որքան Կօկօն կղզակապիկների մէջ։

Ովկիանոսի կապոյտ ալիքները պատռելով լողում է շոգենաւը. նաւորդները բոլորն էլ ընտրեալ մարդիկ են—գիտնականներ ու ճանապարհորդներ, որոնք պտտում են աշխարհի շուրջը, նրա զանազան մասերում եղած կենդանիների կեանքն ուսումնասիրելու համար։ Իրենց հետ շատ հետաքրքիր կենդանիներ ունեն, որոնց թւում նաև կապիկներ։ Տախտակամածի վրայ անվերջ ծիծաղ է բարձրանում. մինը ծիծաղելի գլխկոնծիներով ու յիմարութիւններով զարմացնում է հասարակութեանը, որ երկար ու տաղտկալի ճանապարհորդութիւնից մի փոքր հանգստանալու համար բարձրացել է այդտեղ։ Այդ ո՞վ է. դա Բօբի օրանգն է, որ փոքրիկ կապիկների հետ արած յիմարութիւններով ու զանազան խաղերով զարմացնում է հասարակութեանը։ Նա դեռ ուրախ է. իր վիճակի ամբողջ ծանրութիւնը դեռ չէ զգում.—գերութեան մէջ, հեռու նէիրական հայրենիքից, սիրելի ընկերներից, սիրասուն զաւակներից ու զրկւած ոսկէ ազատութիւնից։ Բռնւելը մի ամիս հազիւ կայ, և կարողացել է փոքը ի շատէ իւրացնել այդ իրեն համար օտար պայմանները։ Անկարգութիւններից յոգնելով, նա տախտակամածը

թողնում, գնում է ցած՝ խոհարարի մօտ. այսօր երկուշաբթի է. նա շատ լաւ է յիշում, որ իրեն այսօր են շաքարով ու դարչինով դոնդող (кисель) տալիս։ Նախաճաշից յետոյ նա անշնորհք քայլերով նորից է տախտակամած բարձրանում՝ իր պարապմունքը շարունակելու։ Ժամի երկուսին ճաշի զանգը հնչում է. Բօբին խոկոյն իջնում է իր խցիկն ու սեղան է նստում. ճաշի ժամանակ նա միշտ իրեն հանգիստ ու մաքուր է պահում. միայն ցաւն այն է, որ գդալով արդանակ ուտել ոչ մի կերպ չէ կարողանում։ Պնակը վերցնում ու ամբողջապէս գլխին է քաշում. այդտեղ նրա համար մի բաժակ գինի էլ կայ, որ սաստիկ սիրում է։ Բօբին գինին վերցնում, դեռ հոտոտում է, կարծես դեռ հոտից է ուզում բաւականութիւն ստանալ. ապա բաժակը շրթունքներին տանելով, խմում է մինդամից։ Ինչպէս երևում է գինին դիւր է գալիս, որովհետև բաժակը մեկնում է, որ նորից լցնեն. բայց վճռական մերժումն է ստանում։ Բօբին սեղանից չի հեռանում. նա գիտէ, որ դեռ քաղցր էլ պիտի տան, այսօր կօկօսեան ընկոյզ է։ Ճարպիկութեամբ ծակում է պօպօքը, դեռ միջի կաթն է խմում, յետոյ կոտրում ու միջուկն է ուտում։ Վրայ է հասնում գիշերը. արևը հօրիզոնի եռանն է անցնում. Բօբիի քնելու ժամանակն է. բայց նա դեռ մի փոքրիկ գործ էլ ունի. դեռ պիտի թափ տայ և ուղղի դօշակը. այդ էլ վերջացնելուց յետոյ անուշ ու խոր քուն է մտնում, որպէս զի միւս օրն արևի հետ նորից վեր կենայ։ Այսպէս մինը միւսի ետևից անցնում են օրերը—միանման, տաղտկալի, իսկ շոգենաւը հեռու, հեռու, դէպի Գերմանիա է լողում։ Հետզհետէ սկսում է ցրտել և Բօբին անհանգստանում է. տաք երկրին սովոր Բօբին տխրում, խոժոռում ու անշարժանում է։ Տախտակամածում նախկին խինդն ու ծիծաղն այլ ևս չկայ. չկան ո՛չ հնարագէտ Բօբին, ո՛չ նրա բարեկամները։ Ցուրտ, ցուրտ, ցուրտ.—ահա թէ ինչ է զգում նա. փախչում է խցիկը և այնտեղ դօշակի վրայ պինդ նստած, աշխատում է որքան կարելի է փաթաթուել բրդէ վերմակում։ Բայց և այնպէս նա Գերմանիա չտեսաւ, որով-

հետև ճանապարհին մի դժբաղդութիւն հանդիպեց ու մեռաւ։ Թէ ինչից առաջացաւ այդ անսպասելի մահն, այդ յետոյ կպատմեմ։

VII

Գիտնականներն ու ճանապարհորդները կապիկների նենգութեան, խորամանկութեան ու հնարագիտութեան մասին շատ բաներ են պատմում. այդ պատմութիւններից մի քանիսն այնքան նշանաւոր են և այնքան լաւ են բնորոշում կապիկներին, որ չեմ կարող այստեղ առաջ չբերել։ Վերցնենք հետևեալ դէպքը. մի պարոն մի կապիկ ունէր. նրա տան ներքին յարկում գանձարանն էր, որի պատուհանները գողերի առաջն առնելու համար երկաթներով էին հիւսած։ Թէ կապիկն ինչպէս կարողացաւ մտնել այնտեղ—յայտնի չէ. փաստ է միայն, որ նա մտնում է գանձարան, բաց է անում արկղը, և մի քանի արծաթ դրամներ գողանալով, թաղցնում է իր պարկում։ Դեռ լաւ է, որ կապիկի տէրը գողութիւնը բռնեց և գանձապահին զգուշացրեց. եթէ ոչ վերջինիս բանը բուրդ պիտի լինէր։ Հասսանը, որի մասին արդէն պատմել եմ, գողերի թագաւորն էր. նրա գողութեանն ու սատանայութիւններին վերջ չկար. նրա առաջին գործն եղաւ լաւ ուսումնասիրել նկուղների, ամբարների և խոհանոցների դասաւորութիւնը, որ փակ ժամանակը բանալ կարողանայ. և այդ նրան միշտ յաջողւում էր։ Մի անգամ Հասսանի տան տիրուհին լսեց թխսի օրհասական կըշկշոցը. բանից դուրս եկաւ, որ պատճառը Հասսանն էր, որ հսկել ու գողացել էր հաւի նոր ածած ձուն, որ նրա սիրած բանն էր։ Ասենք դա առաջինը չէր, որովհետև շատ անգամ էր տուն եկել ձուոտ դնչով. դրա համար նա լաւ նախատինք ու ծեծ կերաւ. դասն ի զուր չանցաւ.— մի անգամ նա գնաց այն սրահն, ուր հաւերը ձու էին ածում. սպասեց մինչև հաւի ձու դնելն. իսկոյն վերցրեց ու

վազելով բերաւ տիրուհուն տուաւ, իսկ ինքը ժամանալով ետ քաշուեց։ Առանձնապէս կաթ ու սեր շատ էր սիրում, որոնցից մեծ քանակութեամբ ոչնչացնելով, անագին վնաս էր տալիս տնտեսութեանը. թէպէտ դրա համար քօթակ շատ էր ուտում։ Բայց այս անգամ դասը փոխանակ օգնելու, նրան ստիպեց մեծ ճարպիկութեան ու խորամանկութեան դիմել։ Այնուհետև կաթի ու սերի պուլիկը գողանում, բարձրանում էր ծառը. այնտեղ պուլիկը լաւ դատարկում ու ցած էր գցում. բայց յետոյ երևի մտածեց, որ պուլիկներն ի զուր չպիտի ջարդել, որովհետև զգուշութեամբ ցած էր բերում ու յանձնում տանտիկնոջը։ Հասսանն իր սատանայութիւնը շատ տեղ էր ցոյց տալիս։ Օրինակ. երբ մի բանում մեղադրւում ու պատժի էր դատապարտւում, իսկոյն մեռած ձևանալով ազատւում էր, որից յետոյ իր վրէժն առնում էր կծելով ու սկսում էր հրհռալ՝ գոհ, որ կարողացաւ խաբել ու ու մոլորեցնել։

Մի կապուցին (կապիկների տեսակ), որի անունը Միկի էր, գողութիւն շատ էր արել։ Շատ վարպետօրէն որսում էր ձուից նոր դուրս եկած բադիկներին. նա վերցնում էր մի կտոր հաց և բակում ման եկած ժամանակ մօտենում ու մեկնում էր նրանց. հէնց մինը մօտենում էր թէ չէ, իսկոյն ճարպիկ Միկին բռնում ու սիրտն ուտում էր։ Միկին բաւական ծեծ ուտելուց յետոյ միայն թողեց այս սովորութիւնը։ Սրա հնարագիտութիւնը շատ բաներում էր երևան գալիս. օրինակ. երբ ձեռքը մի առարկայի չէր հասնում, փայտով էր դէպի իրան քաշում։ Եթէ նրան փայփայում էին, նա այդ դէպքից շատ անբարեխղճութեամբ էր օգտւում—զգոյշ կերպով քրքրում էր իրեն փայփայողի գրպանը և անպատճառ մի բան էր գողանում։ Շատ է պատահել, որ նա նամակներ է դուրս քաշել ու իսկոյն ծրարից էլ հանել է։ Ասել, թէ կապիկները կամ վատ յիշողութիւն ունեն, կամ ստացած վիրաւորանքը շուտ են մոռանում, սխալ կլինի (նկար 14)։

Երևում է, որ իրենց վիրաւորողին չեն մոռանում ու

դէպքն եկած ժամանակն էլ վրէժխնդիր են լինում։ Իբրև ապացոյց, ես առաջ կբերեմ շատ փաստերից մինը, որ շատ ուսանելի է։

Սպայի մէկն իր պաւիանին անտեղի կատակներով շատ էր կատաղեցրել։ Պաւիանն, ինչպէս երևում է, այդ բանը ժաքումը պահել և վճռել էր վրէժ առնել իր թշնամուց։ Եւ

Նկ. 14. Միկո եւ կապուցիններ.

ահա սպան մի կիրակի օր զուգած՝ զօրահանդէս էր շտապում։ Պաւիանը տեսաւ թէ չէ, կայծակի արագութեամբ վազեց, մի փոսում ցեխ արաւ ու սպան անցնելիս, տուր թէ կտաս, ցեխով մէջքին։ Սպան զօրահանդէսից զրկուեց. իսկ պաւիանն անչափ ուրախացաւ ու ամեն անգամ սպային պատահելիս ծիծաղում էր։ Երբ խօսքը կապիկների հնարագիտութեան մասին է, չեմ կարող մոռանալ մի կապուցինի,

որ երկար ժամանակ ապրել էր անգլիացի գիտնական Բօմէնսի մօտ։ Բօմէնսը յանձնարարել էր իր աղջկանը՝ դիտել կապիկի իւրաքանչիւր արարքը և մի առանձին տետրում նշանակել։ Աղջիկն այդպէս էլ անում էր։

Ինչով էր նշանաւոր այդ կապիկը. առաջ նրան վանդակում էին պահում, իսկ յետոյ սենեակ բերին ու շղթայով լուացարանին կապեցին։

Ամբողջ օրը նա զբաղուած էր—սիրում էր չարութիւններ անել, կոտրել, կոիւ դցել, կծել և այլն։ Նրան փայտ էին տալիս. նա փայտի մի ծայրը կոխում էր պատի ու մի ծանր առարկայի մէջ, իսկ միւս ծայրից ուժը պատածին չափ քաշում, կոտրում էր. շորի կոտոր էր ընկնում ձեռքը, նոյնպէս.—ատամներով ծուիկ-ծուիկ էր անում։ Ընկոյզ շատ էր սիրում և երբ չէր կարողանում ատամներով կոտրել, վերցնում էր իրեն մօտ ջրի համար դրած գնակն ու տակով խփում էր ընկոյզին, որ ջարդէ։ Ծանտիկինն այս տեսնելով, մի մուրճ տուաւ նրան. կապուցինը դեռ լաւ զննեց մուրճը և յետոյ սկսեց նրանով՝ ինչպէս հարկն է ընկոյզներ կոտրել։ Մի անգամ էլ ընկոյզը դուրս պրծաւ և այնքան հեռու գլորուեց, որ կապուցինի ձեռքը չհասաւ. նա մի փայտ վերցրեց ու փորձեց դրանով մօտեցնել. այդ էլ չաջողուեց. այդ ժամանակ նա վերցրեց իր վերմակը, երկու ծայրից բռնեց, տարաւ դէպի ուսը և յետոյ այնպէս զցեց, որ ընկոյզը ծածկեց. այնուհետև զգուշութեամբ դէպ ինքը քաշեց վերմակը, իսկ նրա տակ նաև ընկոյզը։ Մի անգամ մտքովը անցաւ չարութիւն անել այնտեղ, ուր ինքը չէր հասնում. մօտեցաւ լուացարանին, որին իր շղթան էր ամրացրած, մի կերպ լուացարանն այնքան առաջ քշեց, որ կարելի եղաւ մտնել նրա ու պատի մէջ. շորս թաթերով յենուեց պատին ու լուացարանն այնքան առաջ տարաւ, որ այնուհետև կարողացաւ ազատ կերպով հասնել իր ցանկացած առարկային։

Նա չէր տանում, երբ իրեն ծաղրում էին. տաքանում և դէպի վիրաւորողն էր շպրտում ամեն ձեռն ընկած բան։ Մի անգամ այդ միևնոյն սենեակը մտաւ մի դերձակուհի.

Բոմէնսի քոյրն ուզեց ցոյց տալ թէ իրենց կապիկն ինչպէս լաւ մուրճ գործածել գիտէ և նրան ընկոյզ տաւ։ Կապիկն իսկոյն ընկոյզը կոտրեց, բայց փուչ դուրս եկաւ։ Դերձակուհին տեսնելով կապիկի թթուած դէմքը, ծիծաղեց։ Կապիկը սաստիկ վիրաւորուեց և դէպի նա շպրտեց ամեն բան.— սկզբում դատարկ կճեպները, յետոյ մուրճը, սրճամանը, նոյն իսկ իր սիրելի վերմակը։ Կուելիս նա անչափ ծիծաղելի էր։ Տեսնելով, որ բարկութիւնից, զոռում գոչիւնից ու յատակը ծեծելուց ոչ ոք չի վախենում, աշխատում էր իրեն վիրաւորողին այլ կերպ վշտացնել։ Երբեմն կուելիս մի ծաղը բան առած ձեռքը բարձրանում էր մուհաջարի վրայ ու այնտեղից գցում էր հակառակորդի գլխին։

Բայց նա միշտ այդպէս անկարգ չէր. յաճախ ժամերով հանգիստ նստած՝ աշխատում էր մի որև է խնդիր վճռել։ Այսպէս. մի անգամ նրան լուրջ զբաղուած գտան.—պատելով ուզում էր խոզանակը (щетка) կոթից հանել. երկար աշխատելուց յետոյ այդ նրան յաջողուեց. սակայն հիմայ էլ նոր հարց առաջ եկաւ—ինչպէս նորից հագցնել։ Այդ գործը նա այնքան համբերութեամբ տարաւ, որ վերջ ի վերջոյ նպատակին հասաւ. և ըստ երևոյթին գոհ մնաց իր յաջողութիւնից։ Մի այլ անգամ աւելի ծանր խնդիր տուին. պիտի սնդուկը բանալիով բանար. խեղճն ամբողջ 2 ժամ չարչարուեց և անպատճառ կբանար, եթէ սնդուկի փակը մի փոքր փչացած չլինէր։ Նա երկար չարչարուելուց յետոյ բանալին իր տեղը դրաւ. և սկսեց երբեմն դէպի աջ, երբեմն դէպի ձախ դարձնել, ամեն անգամ սնդուկի կափարիչը դէպի վեր քաշելով. կարծես ուզում էր իմանալ բացուե՞ց թէ ոչ։ Նրա արածները մէկիկ-մէկիկ թուելը մեզ շատ հեռու կտանէր։

Իբրև վերջաբան կպատմեմ թէ նա ինչպէս վարուեց իր տիրոջ՝ Բոմէնսի հետ։

Բոմէնսը կապուցինին կենդանաբանական այգին տաւ և երբեմն գալիս էր նրան այցելելու։ Կապիկը ոչ միայն յիշում էր իր տիրոջը, այլ և ամեն նրան տեսնելիս խելքը գնում էր։ Բաւական էր որ Բոմէնսը ժամանակ նրա վանդակին. նա ճանաչելուն պէս իսկոյն վեր էր թռչում, ժամ վազում, ձեռք մեկնում և ամեն կերպ աշխատում իր ուրախութիւնն արտայայտել։ Իսկ երբ Բոմէնսը հեռանում էր, կապիկը երկար-երկար աչքերով ճանապարհում էր նրան, մինչև որ այլ ևս չէր երևում։

VIII

Կապիկներից ոմանց մեծ պակասութիւններից մինն էլ ոգելից խմիչքների սէրն է. գինու, օղիի, գարեջրի համար նրանք ուզղակի մեռնում են։ Մէկը նոյն իսկ հարբեցութեան զոհ գնաց։ Մի տեսակ խմիչք կայ—մէրիզա, որ գարեջրի պէս է. այս խմիչքը սաստիկ սիրում էին այն կապիկները, որոնց շոգենաւով Բրէմը տանում էր. մի անգամ ծածուկ այդ խմիչքից բաւական խմել էին. երբ մի բաժակ գարեջուր էլ տիրոջից ստացան, այս կապիկներն խսպառ հարբեցին։ Հարբած դրութեամբ պաւիանները շատ զզուելի, չար, կոպիտ, անպիտան ու անխիղճ էին։ Երկրորդ առաւօտը, երբ երևան եկաւ խումարութիւնը, նրանց դրութիւնը բաւական ցաւալի էր. սաստիկ գլխացաւ զգացող մարդու պէս նրանք գլուխները բռնած, շարունակ նստում էին. ուտելիքի ու խմիչքի վրայ զզուանքով էին նայում ու խուժար մարդու պէս ագահութեամբ կլանում էին ամեն տեսակ աղի ու թթու բան. և ի՞նչ էք կարծում—դրանից յետոյ նրանց դրութիւնը փոքր ինչ լաւացաւ։ Դուք, անշուշտ, յիշում էք այն Բօբին, որ Գերմանիա չհասած ճանապարհին մեռաւ. այդ անսպասելի մահուան պատճառը չափազանց խմելուց առաջացած տիֆն էր։ Մի անգամ Բօբին բուֆէտ մտնելով, այնտեղ կողովի մէջ մի քանի շիշ գինի է տեսնում. մէկը վարպետօրէն հանում ու ամբողջապէս դատարկում է. տասն բոպէ չանցած, նա արդէն հարբած էր. սկսում է աթոռների ու սեղանների վրայ թռչկոտալ, գլխկոնծի տալ, դէմքը ծռմռել, խելագարի պէս դէս ու դէն ընկնել. մի խօսքով մի այնպիսի աղմուկ է

բարձրացնում, որ բոլոր քնածներին արթնացնում է։ Այնուհետև ընկնում է յատակի վրայ ու անշարժ մնում, մինչև որ նրան վերցնում, պարկեցնում են։ Դրանից յետոյ Բոբին սկսում է սաստիկ դողացնել, որ շաբաթներ է տևում. բժշկութիւնը նրան չէ կարողանում օգնել և նա 14-րդ օրը մեռնում է։ Բոբին իր հիւանդ ժամանակը շատ ջերմ էր վերաբերուում իր բժշկին ու տիրոջը։ Մենք արդէն մի քանի անգամ տեսանք, որ կապիկի սրտում սիրոյ ու բարեկամութեան համար տեղ կայ։ Այդ պատմութիւններին 2—3 էլ կաւելցնեմ, որոնք շատ լաւ ցոյց են տալիս, թէ առհասարակ կապիկն ինչպէս է վերաբերուում դէպի իր ձագերը, որդեգիրներն ու մարդիկ։

Ահա Բրէմի նկարագրած դէպքը. մայրն իր ձագի հետ ծառի տակ խաղում է. մի հրացան է պայթում և գնդակը վիրաւորում է մօր կուրծքը. մայրն այդ բոպէին էլ իր ձագի մասին է մտածում.—բոլոր ուժերը հաւաքելով, ձագին առնում ու ծառն է հանում, նա այդպիսով ձագին փրկուած է համարում. իսկ ինքն ընկնում է անշնչացած։ Բայց տեսէք, թէ Կոկոն ինչպէս վերաբերուեց իր որդեգրի մահուանը. նա սկզբում դեռ հաւատալ չէր ուզում.—սիրածին գիրկն առաւ, փայփայեց, յարդարեց ու նստեցրեց յատակին։ Բայց յուսահատութիւնը կամաց-կամաց պաշարեց նրան, երբ տեսաւ իր զաւակի անշարժութիւնը, նոյն իսկ գետին փուելը։ Նա նորից գրկեց, նորից նստեցրեց, բայց անյաջող. այնուհետև նա սկսեց ցաւալի կերպով հառաչել, և որքան վիշտ կար այդ հառաչում. նոյն իսկ նրա անախորժ ձայնն ինչ որ փափկացել ու քնքշացել էր. բայց ցաւն իրենն արաւ. և մեղմ ու տխուր հառաչը սոսկալի ոռնոցի փոխուեց։ Շատ ցաւեց Կոկոի տէրը և հրամայեց դիակը բարձր պատի միւս կողմը գցել. կարծում էր, թէ Կոկոն կմոռանայ ու կհանգստանայ. բայց այդպէս չեղաւ. Կոկոն խելագարի պէս իր թոկը կտրեց ու դիակը ետ բերեց։ Այդ բանը մի քանի անգամ կրկնուեց. այն ժամանակ հրամայեցին դիակը թաղել։ Կէս ժամ չանցած՝ Կոկոն տանից դուրս ընկաւ և այլ ևս չվերադարձաւ.

ինչ եղաւ—յայտնի չէ։ Կապիկ որսողներն աւելի ցաւալի տեսարանների են ականատես լինում։ Պատմենք դրանցից մինը։ Բրէմը զնդակահար արաւ ծառի վրայ նստած մի կապիկի. բ յց միայն վիրաւորել էր. նա ծառից ընկաւ, բայց փախչել չկարողացաւ, այլ սկսեց սրբել վէրքից հոսող արիւնը և ձեռքով սղմել բացուածքը. կարծես ուզում էր ծորող արիւնը կանգնեցնել։ Նրա դէմքը դէպի Բրէմն էր. և որքան տանջանք ու վիշտ կար այդ դէմքի վրայ։ Կապիկի լուռ ու յանդիմանող հայեացքը կարծես ասում էր. «Բո ինչին էին պէտք իմ ցաւերը, ինչու՞ զրկեցիր ինձ զարմուհիից. ինչով էի ես արժանի այս տանջանքին»։ Բրէմը դիմանալ չըկարողացաւ. հանգստացնելու համար նա դաշոյնի մի քանի հարուածներ հասցրեց, որից յետոյ խեղճ կենդանին շունչը փչեց։ Այս դէպքն այնքան խոր ազդեց Բրէմի վրայ, որ նա խօսք տուաւ այլ ևս կապիկների վրայ զնդակ չարձակել։

Հնումը կապիկների մասին ծիծաղաշարժ բաներ շատ էին պատմում. ասենք հիմայ էլ պատմուում են։ Նրանց միշտ սատանայի հարազատ զաւակներ են անուանել։ Միայն հնդիկներն ու եգիպտացիք են յարգանքով վերաբերուել։ Այդ ազգերը կապիկներին Աստծու տեղ էին դնում և նրանց պատուին տաճարներ էին շինում, զոհեր էին բերում և իրենց միւս աստուածներին քարերի վրայ նրանց պատկերով էին ներկայացնում։ Արաբներն, ընդհակառակը, տանել չեն կարողանում—նրանք ասում են թէ՝ կապիկը սատանայի ու մարդու մէջ եղած ինչ որ բան է, սատանայի յետնորդը, նրա թոռը, ծոռն է. թէ երկնքի ու երկրի արարիչը նրան պատժելու համար մարդուց զզուելի հրէշի է վերածել, նրա համար ոչ մի սրբութիւն չկայ, որ ոչինչ չէ յարգում ու բարուոյ և չարի մէջ խտրութիւն չէ դնում։ Աֆրիկայի նեգրները, որոնց մօտ կապիկների ահագին հասարակութիւններ կան, նրանց համարում են մարդու մի այլ մազոտ տեսակը։

Հնդկաստանում յարգուած կապիկների մէջ յետին տեղ չեն բռնում նաև խուլմանները. ինչով են այդ կապիկներն

այդպիսի պատուի արժանացել։ Հնդիկների մի աւանդութիւն պատմում է, թէ հսկայ Բավանը Սիտա թագուհուն փախցնելով, տարել է Ցեյլոն կղզին։ Խուլմանը կարողացել է ազատել խեղճ գերուն և բերել թագաւորին. ահա այդ օրից հնդիկներն սկսել են աստուածացնել խուլմաններին։ Հնդիկները դրանց ուրիշ արժանաւորութիւններ էլ են վերագրում. նրանց կարծիքով խուլմանը ոչ միայն կարողացել է թագուհուն գերութիւնից ազատել, այլ և յաջողեցրել է հսկայի այգուց նրանց համար գեղեցիկ պտուղներ էլ գողանալ, որոնք այնուհետև աճել են նաև Հնդկաստանում։ Պէտք է ասել, որ հնդիկներն այդ կապիկներին պատուելու մի այլ յարգելի պատճառ էլ ունեն։ Նրանք իրենց յատուկ միամտութեամբ կարծում են թէ՝ իրենց նախորդների հոգին խուլմանների մէջ է մտնում, թէ իրենք էլ պիտի մեռնելուց յետոյ խուլմաններ դառնան։ Այս յիմարութիւններին հաւատալով, նրանք խուլմաններին յարգում են իբրև իրենց մեռած հայրերի ու զաւակների. իսկ խուլմաններն, ինչ խօսք, օգտւում են այդ բանից։ Այս սրբազան կենդանուն սպանելը մեծ մեղք է համարւում. այդ պատճառաւ էլ հնդիկները ոչ միայն իրենք չեն ձեռք տալիս նրանց, այլ և ուրիշներին արգելում են։ Մի անգամ մի հոլլանդացի գալով Հնդկաստան և չիմանալով տեղացիների այդ սովորութիւնը, մի խուլման է սպանում։ Եւ գիտէ՞ք ինչ եղաւ. Հնդիկներն այնպիսի աղմուկ բարձրացրին, որ հազիւ կարելի եղաւ նրանց հանգստացնել. նրանք կարծում էին թէ՝ ինչպէս հոլլանդացին, այնպէս էլ այդ սպանութիւնը չարգելողները բոլորը կմեռնեն։ Բայց, ի հարկէ, բոլորն էլ անվնաս մնացին։ Որովհետև խուլմաններին սպանելն արգելւած է, այդ պատճառով այդ կապիկներն էլ զարմանալի ստահակութիւններ են անում.— նրանք ոչ միայն ամենաանխիղճ կերպով կողոպտում են հնդիկների այգիներն ու բանջարանոցները, այլ նաև առանց այլևայլութեան սենեակներն են մտնում և քիչ է մնում մարդկանց բերանից կերակուր հանեն (նկ. 15)։

Բայց պէտք է վերջացնել.

Բոլոր այս գրքոյկում պատմածներից դուք տեսաք, թէ կապիկների մէջ մարդկային որքան շատ բան կայ. և ընդհակառակն, մարդու մէջ կապկային որքան կայ։

Դուք տեսաք, որ խելքը, ժրութիւնը, ճարպիկութիւնն ու հնարագիտութիւնը միայն մարդուն չեն յատուկ. որ՝ ինչպէս մարդիկ, այնպէս էլ կապիկները իրարից խելքով ու բնաւորութեամբ տարբերւում են։ Բացի նենգ ու խորամանկներից դուք տեսաք նաև անձնուէր ու բարի կապիկներ։ Բացի գողերից, վրէժխնդիրներից ու չարերից դուք տեսաք



Նկ. 15. Խուլմաններ.

այնպիսիներին էլ, որոնք իրենց բարութեամբ ու սրտակցութեամբ շատ մարդկանցից պակաս չեն։ Բայց չկարծէք թէ բոլորն էլ կապիկների մասին լաւ կարծիք ունեն։ Օրինակ. Օկէն գիտնականի ասելով կապիկները մարդուն միայն

չարութեամբ են նման. նրանք չար, կեղծաւոր, նենգ, անհանգիստ ու գող են. նրանք մարդուն ոչ մի օգուտ չեն տալիս, թէպէտ շատ բանի են վարժւում—պահապանութիւն են անում, զանազան իրեր են կրում, բայց այդ բոլորը անում են մինչև այն ժամանակ, քանի դա իրենց բաւականութիւն է պատճառում։

Դուք ի՞նչ կասէք. ճշմարիտ է ասում ծերունի Օկէնը թէ ոչ։

ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՆՐԱՊԵՏ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Հ.Հ Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0260629

13129